

**ACCU-CHEK®**  
SmartGuide



**ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻ ՁԵՌՆԱՐԿ  
ACCU-CHEK SMARTGUIDE ՅԱՎԵԼՎԱՅ**

## **Բովանդակություն**

**1 Այս ձեռնարկի մասին**

**2 Արտադրանքի մասին տեղեկատվություն**

**2.1 Ինչպես կիրառել**

**2.2 Ովքեր կարող են օգտագործել**

**2.3 Ցուցումներ, հակացուցումներ և սահմանափակումներ**

**2.4 Հիմնական առանձնահատկությունները**

**3 Անվտանգության մասին ընդհանուր տեղեկատվություն**

**4 Ինչպես օգտագործել հավելվածը**

**4.1 Հավելվածի օգտագործման նախապայմանները**

**4.2 Ինչպես ներբեռնել և հեռացնել հավելվածը**

**4.3 Ինչպես գործարկել և փակել հավելվածը**

**4.4 Նավիգացիոն տարրեր**

**5 Աշխատանքի սկիզբ**

**6 Ինչպես կարգավորել հեռախոսը**

**6.1 Ընդհանուր պահանջներ**

**6.2 Հասանելիության պաշտպանություն**

**6.3 Ծանուցումների կարգավորումներ**

**7 Ինչպես զուգակցել սենսորը**

**8 Ինչպես չափաբերել սենսորը**

**9 Հիմնական էկրան**

**10 Գրանցամատյան**

**11 Գրաֆիկներ և վիճակագրություն**

**11.1 Ինչպես օգտագործել գրաֆիկները և վիճակագրությունը**

**11.2 Միտումների գրաֆիկ**

**11.3 Ժամանակը միջակայքում (TIR)**

**11.4 Վիճակագրություն**

**12 Ինչպես կառավարել սենսորը**

- 13 Թերապիայի կարգավորումներ**
  - 13.1 Գլյուկոզայի ահազանգեր**
  - 13.2 Նպատակային միջակայք**
  - 13.3 Չափման միավոր**
- 14 Հավելվածի կարգավորումներ**
  - 14.1 Սենսորի ժամկետի սպառման մասին հիշեցումներ**
  - 14.2 Սենսորի կապի կորստի ահազանգ**
- 15 Օգտահաշվի կարգավորումներ**
- 16 Accu-Chek օգտահաշիվ**
  - 16.1 Օգտահաշվի ստեղծում**
  - 16.2 Մուտք գործել**
  - 16.3 Դուրս գալ**
  - 16.4 Օգտահաշվի ջնջում**
- 17 CGM-ի տվյալների գնահատում**
- 18 Խնդիրների վերացում**
  - 18.1 Իրադարձությունների մատյան**
  - 18.2 Ընդհանուր խնդիրների վերացում**
  - 18.3 Ծանուցումների տեսություն**
- 19 Ինչպես օգտագործել Apple Watch-ը**
- 20 Ինչպես հեռացնել սենսորը**
- 21 Տեղեկատվություն ոչ նչացման մասին**
- 22 Հաճախորդների սպասարկում**
- 23 Ծրագրի թարմացված տարբերակներ**
- 24 Տեխնիկական տվյալներ**
  - 24.1 Accu-Chek SmartGuide հավելվածի տեխնիկական տվյալները**
  - 24.2 Accu-Chek SmartGuide սարքի տեխնիկական տվյալները**
- 25 Լիցենզիայի մասին տեղեկատվություն**
- 26 Բառարան**
- 27 Հապավումներ**
- 28 Հավելվածի նշանների բացատրությունը**

## 29 Պայմանանշանների բացատրություն

### 1. Այս ձեռնարկի մասին

Չավելվածի բոլոր գործառույթներին ծանոթանալու համար ուշադիր կարդացեք հրահանգները: Եթե հավելվածը չի աշխատում այնպես, ինչպես ակնկալում եք, տե՛ս այս Օգտագործողի ձեռնարկի «Խնդիրների վերացում» բաժինը: Եթե, այնուամենայնիվ, չեք գտնում անհրաժեշտ տեղեկությունը, կապ հաստատեք հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ:

Այս Օգտագործողի ձեռնարկում հետևյալ տեղեկատվությունն առանձնահատուկ կերպով է նշված.



**ԶԳՈՒՇԱՑՈՒՄ**

«ԶԳՈՒՇԱՑՈՒՄ» նշանը վերաբերում է կանխատեսելի լուրջ վտանգին:



**ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑ**

«ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑ» նշանը նկարագրում է, թե ինչպիսի քայլեր պետք է ձեռնարկել արտադրանքն անվտանգ և արդյունավետ օգտագործելու կամ դրա վնասումը կանխելու համար:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ**

«ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ» բաժինը պարունակում է օգտակար տեղեկություններ և խորհուրդներ:

Այս Օգտագործողի ձեռնարկը պարունակում է բոլոր տեղեկությունները, հրահանգները և տեխնիկական տվյալները, որոնք անհրաժեշտ են ձեզ հավելվածն ու սենսորն օգտագործելու համար: Սենսորն ապլիկատորի միջոցով տեղադրելու մասին տեղեկությունների և հրահանգների համար կարդացեք Accu-Chek SmartGuide սարքի հետ տրամադրվող թերթիկը:

## 2 Արտադրանքի մասին տեղեկատվություն

### 2.1 Ինչպես կիրառել

Գլյուկոզայի շարունակական մոնիթորինգի (CGM) հավելվածը նախատեսված է միացված սենսորից իրական ժամանակում գլյուկոզայի ցուցանիշների շարունակական ցուցադրման և ընթերցման համար:

### 2.2 Ովքեր կարող են օգտագործել



ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑ

Տարբեր վնասների ռիսկ

Եթե դուք չեք պատկանում նպատակային խմբին, հավելվածի պատշաճ և անվտանգ աշխատանքը չի կարող երաշխավորվել:

- Չափահասներ՝ 18 տարեկան և բարձր անձինք
- Շաքարային դիաբետ օգտագործմամբ անձինք
- Շաքարային դիաբետ օգտագործմամբ անձանց խնամողներ

### 2.3 Ցուցումներ, հակացուցումներ և սահմանափակումներ

#### Ցուցումներ

Հավելվածը նախատեսված է շաքարային դիաբետով օգտագործմամբ անձանց (կամ նրանց խնամողների) համար, ովքեր օգտագործում են Accu-Chek SmartGuide սարքը:

#### Հակացուցումներ

#### Հավելված

Հայտնի հակացուցումներ չկան:

#### Սենսոր

- Սարքը չպետք է օգտագործվի ծանր վիճակում կամ դիալիզի թերապիա ստացող հիվանդների կողմից:
- Սենսորը պետք է հեռացվի նախքան հատուկ միջավայրեր մտնելը (համաձայն IEC 60601-1-2): Հատուկ միջավայրեր են ռազմական գոտիները, ծանր արդյունաբերական տարածքները և բուժական գոտիները, որտեղ կան բարձր հզորության բժշկական էլեկտրական սարքավորումներ (օրինակ՝ մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա (MRI), համակարգչային տոմոգրաֆիա (CT), ռենտգեն, ճառագայթային թերապիա կամ դիաթերմիա):

## Սահմանափակումներ

### Հավելված

- Հավելվածը սենսորի հետ հաղորդակցվում է Bluetooth® Low Energy տեխնոլոգիայի միջոցով: Սարքերը, որոնք աջակցում են Bluetooth Low Energy-ի 5.0-ից ցածր տարբերակներ, կարող են համատեղելի չլինել:
- Օգտագործողն ահազանգեր կստանա միայն այն դեպքում, եթե սենսորը միացված է հավելվածին, և ծանուցումները ակտիվացված են օգտագործողի կողմից:
- Հավելվածը նախատեսված չէ այն անձանց համար, ովքեր չեն կարողանում կարդալ հեռախոսի էկրանին ցուցադրվող տեղեկատվությունը:
- Հավելվածը բժշկական խորհրդատվություն չի տրամադրում:
- Հավելվածը ձեզ տեղեկացնում է ահազանգերի մասին հիմնականում ձայնի միջոցով: Բացի այդ, կարող են օգտագործվել ծանուցման այլ մեթոդներ, օրինակ՝ շոշափելի կամ տեսողական ծանուցումներ: Եթե դուք լսողության հետ կապված դժվարություններ ունեք կամ խուլ եք, ծանուցումների ընկալումը կարող է սահմանափակ լինել: Նման դեպքերում օգտագործեք միայն այն ծանուցման մեթոդը, որը ձեզ համար հարմար է:
- Ահազանգման համակարգի սահմանափակումների պատճառով ահազանգերի ստացումը բոլոր դեպքերում երաշխավորված չէ: Միայն ահազանգերի վրա մի՛ հիմնվեք: Հակառակ դեպքում, դուք կարող եք բաց թողնել արյան մեջ գլյուկոզայի խիստ ցածր և/կամ բարձր մակարդակը: Պարբերաբար բացեք հավելվածը՝ ձեր գլյուկոզայի մակարդակը ստուգելու համար՝ համաձայն Ձեզ բուժող բժշկի հրահանգների, կամ եթե զգում եք, որ ձեր գլյուկոզայի մակարդակը կարող է ցածր կամ բարձր լինել: Երբեք մի՛ անտեսեք ցածր կամ բարձր արյան գլյուկոզայի ախտանիշները:
- Հավելվածը ահազանգեր է տալիս՝ հիմնվելով սենսորի կողմից տրամադրվող CGM-ի տվյալների վրա: Եթե սենսորը գտնվում է Միտումների ռեժիմում, CGM-ի տվյալները կարող են պակաս ճշգրիտ լինել: Արդյունքում, ահազանգեր կարող են տրվել նույնիսկ այն դեպքում, երբ ձեր իրական գլյուկոզայի ցուցանիշը նորմալ է: Հնարավոր է նաև, որ ահազանգեր չտրվեն նույնիսկ այն դեպքում, երբ ձեր իրական գլյուկոզայի ցուցանիշը բարձր կամ ցածր է:
- Հավելվածը ցուցադրում է սենսորի կողմից տրամադրվող CGM-ի տվյալները: Եթե սենսորը գտնվում է Միտումների ռեժիմում, CGM-ի տվյալները կարող են պակաս ճշգրիտ լինել: Հետևեք սենսորի հետ տրամադրվող օգտագործման հրահանգներին:

### Սենսոր

- Սենսորի կողմից չափված միջբջջային հեղուկում գլյուկոզայի մակարդակը կարող է չհամընկնել արյան մեջ գլյուկոզայի իրական մակարդակի հետ: Սա կարող է տեղի ունենալ օրգանիզմում գլյուկոզայի մակարդակի արագ նվազման կամ բարձրացման դեպքում: Այդ դեպքերում միջբջջային հեղուկում գլյուկոզայի

մակարդակը կարող է ավելի բարձր կամ ցածր լինել, քան արյան մեջ: Նման ժամանակահատվածները կարելի է հայտնաբերել դիտելով ձեր հավելվածի միտումների սլաքը: Այս դեպքերում թերապիայի վերաբերյալ որոշումները (օրինակ ինսուլինի դեղաչափը) պետք է հիմնվեն արյան գլյուկոզայի մակարդակը չափող սարքով (գլյուկոմետր) ստացված լրացուցիչ արդյունքների վրա:

- Եթե CGM-ի տվյալը չի համապատասխանում ձեր ակտանիշներին, այն պետք է ստուգվի գլյուկոմետրով:
- Սենսորը պետք է տեղադրվի բացառապես բազկի վերին հատվածում՝ նշված տեղադրման վայրում:
- Սենսորը կարող է տեղեկատվություն ուղարկել հեռախոսին մինչև 10 մետր (33 ֆուտ) հեռավորության վրա (ուղիղ տեսանելիության դեպքում): Իրական հեռավորությունը կարող է կրճատվել կախված հեռախոսից և ձեր միջավայրից (օրինակ՝ մոտակա այլ սարքեր):
- Օգտագործեք CGM-ի տվյալները թերապևտիկ որոշումներ (օրինակ՝ ինսուլինի դեղաչափ) կայացնելու համար միայն այն դեպքում, երբ չափաբերել եք ձեր սենսորը, ինչպես պահանջում է բջջային հավելվածը: Տե՛ս «Ինչպես չափաբերել սենսորը» գլուխը:
- Ներգործող նյութերի ընդունումը կարող է CGM-ի կեղծ բարձր տվյալներ ցուցադրել բջջային հավելվածում, ինչի հետևանքով կարող եք բաց թողնել ծանր հիպոգլիկեմիան: Եթե ընդունում եք նշված ներգործող նյութերից որևէ մեկը, խորհրդակցեք Ձեզ բուժող բժշկի հետ: Ներգործող նյութերի ցանկին ծանոթացեք «Accu-Chek SmartGuide սարքի տեխնիկական տվյալները» գլխում:

## 2.4 Հիմնական առանձնահատկությունները

### Իրական ժամանակի CGM-ի տվյալներ

Ստացեք իրական ժամանակի CGM-ի տվյալներն անմիջապես ձեր հեռախոսի կամ Apple Watch-ի վրա: Օգտագործեք հավելվածը՝ միացված սենսորին, որը տեղադրել եք ձեր բազկի վերին հատվածում: Հավելվածը սենսորի հետ հաղորդակցվում է Bluetooth Low Energy-ի միջոցով: Յուրաքանչյուր 5 րոպե մեկ սենսորը CGM-ի տվյալ է ուղարկում հավելվածին: Յուրաքանչյուր սենսոր ունի մինչև 14 օր օգտագործման ժամկետ և պահանջում է չափաբերում՝ գլյուկոմետրի միջոցով, որպեսզի CGM-ի տվյալներն օգտագործվեն թերապևտիկ որոշումներ կայացնելու համար, ինչպիսիք են ինսուլինի դեղաչափը: 14 օր հետո դուք պետք է հեռացնեք սենսորը և փոխարինեք այն նորով:

### Հիմնական Էկրան

Հիմնական Էկրանը ցուցադրում է կարևոր տեղեկատվություն՝ ձեր դիաբետը կառավարելն օգնելու համար, ինչպիսիք են՝ ձեր ընթացիկ գլյուկոզայի ցուցանիշները և միտումները: Ձեր վերջին գրանցամատյանի գրառումների համառոտ պատկերը թույլ է տալիս հետևել վերջին ինսուլինի ներարկումներին, ածխաջրերի ընդունմանը կամ անձնական նշումներին: Այս տեղեկատվությունը կարող է օգնել ձեզ ձեռնարկել

անհրաժեշտ գործողություններ՝ ձեր գլուկոզայի վերահսկողությունը օպտիմալացնելու և ավելի լավ թերապևտիկ որոշումներ կայացնելու համար:

## **Գրաֆիկներ և վիճակագրություն**

Ձեր նախորդ գլուկոզայի ցուցանիշների վերանայումը կարող է օգնել ձեզ բացահայտել օրինաչափություններ կամ գործոններ, որոնք ազդում են ձեր գլուկոզայի վերահսկողության վրա: Սա թույլ է տալիս բացահայտել բարելավման հնարավոր ոլորտները:

- **Միտումների գրաֆիկը** ներկայացնում է ձեր գլուկոզայի ցուցանիշները և գրանցամատյանի գործողությունները վերջին 6, 12 և 24 ժամվա ընթացքում:
- **Ժամանակը միջակայքում** գրաֆիկն ունի 5 միջակայք և տրամադրում է ամփոփ տեղեկատվություն այն տոկոսային ժամանակի մասին, երբ ձեր գլուկոզայի ցուցանիշները մնացել են այս միջակայքերում (ներառյալ ձեր անձնական նպատակային միջակայքը) վերջին 7, 14 և 28 օրերի ընթացքում: Միջակայքն անհատականացված է՝ համաձայն ձեր կողմից հավելվածի թերապիայի կարգավորումներում կատարված կարգավորումների:
- **Գլուկոզայի կառավարման ցուցիչը (GMI)** գնահատում է սպասվող լաբորատոր HbA1c մակարդակը: HbA1c մակարդակը տեղեկատվություն է տրամադրում ձեր միջին գլուկոզայի մակարդակների մասին ավելի երկար ժամանակահատվածում:

## **Ահազանգեր**

Երբ ահազանգերը միացված են, դուք ահազանգ եք ստանում, երբ ձեր գլուկոզայի ցուցանիշը իջնում է կամ գերազանցում է ձեր սահմանած շեմը: Դուք ստանում եք շատ ցածր գլուկոզայի ահազանգ, երբ ձեր գլուկոզայի ցուցանիշը իջնում է 54 մգ/դլ-ից (3.0 մմոլ/լ): Հավելվածը հուշում է ձեզ ձեռնարկել անհրաժեշտ գործողություն, ինչպես խորհուրդ է տվել ձեզ բուժող բժիշկը: Դուք կարող եք անջատել այս ահազանգերը, եթե չեք ցանկանում ստանալ հիշեցումներ:

## **Անհատականացվող կարգավորումներ**

Կարգավորեք համակարգը ձեր անձնական կարիքների ու նախասիրությունների համաձայն: Կարգավորեք նպատակային միջակայքը, շատ բարձր և ցածր գլուկոզայի ահազանգերի սահմանային շեմը, հիշեցումները և այլն:

### 3 Անվտանգության մասին ընդհանուր տեղեկատվություն

#### Հավելված



#### Սխալ թերապևտիկ որոշումների ռիսկ

CGM-ի տվյալների բացակայության դեպքում համոզվեք, որ ձեր հավելվածը ճիշտ է կարգավորված, և ձեր սենսորն ու հեռախոսը միացված են: Մի՛ փորձեք գուշակել կամ ենթադրել բացակայող CGM-ի տվյալները: Բացակայող CGM-ի տվյալների գնահատումը կամ ենթադրումը կարող է հանգեցնել սխալ թերապևտիկ որոշումների, ինչպիսին է ինսուլինի դեղաչափը: Հավելվածի և ձեր սենսորի ճիշտ կարգավորման մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Աշխատանքի սկիզբ» գլուխը: Եթե վստահ չեք, որ հավելվածը կամ սենսորը ճիշտ են աշխատում, օգտագործեք ձեր գլյուկոզայի ստուգման այլընտրանքային մեթոդը և կապ հաստատեք հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ:



#### Լուրջ վնասի ռիսկ

Բաղադրիչների փոփոխումը կամ օգտագործման հրահանգներին չհետևելը կարող է խանգարել հավելվածի նախատեսված աշխատանքին: Ուշադիր կարդացեք և հետևեք օգտագործման հրահանգներին:



#### Լուրջ վնասի ռիսկ

Ձեր գլյուկոզայի ցուցանիշների կառավարման կամ ընդհանուր թերապիայի փոփոխությունները կարող են կատարվել միայն ձեզ բուժող բժշկի կողմից: Եթե ձեր թերապիայի վերաբերյալ հարցեր ունեք, խորհրդակցեք Ձեզ բուժող բժշկի հետ:



#### CGM-ի տվյալների անհասանելիության ռիսկ

Հավելվածը միշտ չէ, որ կարող է ցուցադրել գլյուկոզայի ցուցանիշները: Ահա երկու օրինակ.

- Եթե ձեր հեռախոսի մարտկոցը լիցքաթափվել է:

- Եթե կորցրել եք ձեր հեռախոսը, համոզվեք, որ ունեք ձեր գլուկոզայի ստուգման այլընտրանքային մեթոդներ:



## **ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑ**

### **Սխալ չափաբերման ցուցանիշների ռիսկ**

Օրինակ, երեխաները կամ ուրիշները կարող են պատահաբար ավելացնել չափաբերման ցուցանիշներ: Սխալ չափաբերման ցուցանիշները կարող են բացասաբար ազդել սենսորի կողմից տրամադրվող CGM-ի տվյալների վրա: Հետևեք տվյալների պաշտպանության հրահանգներին՝ կանխելու երրորդ անձանց մուտքը հավելված: Տե՛ս «Հասանելիության պաշտպանություն» բաժինը:



## **ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑ**

### **Լուրջ վնասի ռիսկ**

Հեռախոսները բժշկական սարքեր չեն: Օգտագործեք միայն հավելվածի հետ համատեղելի հեռախոսներ: Տե՛ս «Accu-Chek SmartGuide հավելվածի տեխնիկական տվյալները» գլուխը: Մի գործարկեք հավելվածը անհամատեղելի կամ չարտոնագրված փոփոխությունների ենթարկված (օրինակ՝ «ռուք» արված) հեռախոսների վրա: Կասկածի դեպքում կապվեք ձեր հեռախոսի արտադրողի հետ:



## **ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑ**

### **Սխալ թերապևտիկ որոշումների ռիսկ**

Միշտ ունեցեք ձեր գլուկոզայի ստուգման այլընտրանքային մեթոդներ: Եթե կորցնեք ձեր հեռախոսը կամ տեղի ունենա համակարգի անսարքություն, անցեք ձեր գլուկոզայի ստուգման այլընտրանքային մեթոդին: Ձեր հեռախոսի շրջակա միջավայրի պայմանների վերաբերյալ տեղեկությունների համար կարդացեք ձեր հեռախոսի Օգտագործողի ձեռնարկը կամ ծանոթացեք ձեր հեռախոսի օպերացիոն համակարգին (ՕՐ):

Ցանկացած անձ, ով բժշկական էլեկտրական սարքավորմանը միացնում է որևէ լրացուցիչ սարքավորում, ստեղծում է բժշկական համակարգ և, հետևաբար, պատասխանատվություն է կրում համոզվելու համար, որ այդ համակարգը համապատասխանում է բժշկական էլեկտրական համակարգերի համար սահմանված պահանջներին:

Ձեր հեռախոսը պետք է համապատասխանի IEC կամ ISO ստանդարտներին (օրինակ՝ IEC 60950 կամ IEC 62368): Կազմաձևումները պետք է համապատասխանեն

բժշկական էլեկտրական համակարգերի պահանջներին (տե՛ս IEC 60601-1-ի վերջին վավեր տարբերակի 16-րդ կետը): Կասկածի դեպքում կապ հաստատեք ձեր հեռախոսն արտադրող ընկերության հետ: Հավելվածը նախատեսված է միայն մեկ անձի օգտագործման համար: Ստուգեք ձեր հեռախոսի կարգավորումները նախքան հավելվածն օգտագործելը:

Հավելվածը պահանջում է ձայն՝ կարևոր տեղեկատվությունը պատշաճ կերպով ազդարարելու համար:

Հակառակ դեպքում, տեղեկատվությունը կարող է բաց թողնվել: Սարքի համար լռելյայն տառաչափից բացի այլ տառաչափերի օգտագործումը կարող է հանգեցնել հավելվածի ոչ պատշաճ աշխատանքի:

### ***Սենսոր***

Հատուկ ուշադրություն դարձրեք սարքի հետ տրամադրվող թերթիկն և անվտանգության վերաբերող տեղեկություններին:

**ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑ****Լուրջ վնասի ռիսկ**

Թերապիայի վերաբերյալ որոշումներ (օրինակ՝ ինսուլինի դեղաչափ) կայացրեք միայն բազմաթիվ ընթացիկ գլյուկոզայի ցուցանիշների և դրանց միտումների ուղղության հիման վրա: Հավելվածի միջոցով ցուցադրած գլյուկոզայի ցուցանիշները միշտ չէ, որ կարող են ճշգրիտ լինել: Թերապիայի վերաբերյալ որոշումներ կայացնելուց առաջ միշտ ստուգեք հավելվածի միտումների գրաֆիկը: Որոշումներ կայացնելիս հաշվի առեք նաև ձեր ընթացիկ առողջական վիճակը և ֆիզիկական ակտիվության մակարդակը: Մի՛ անտեսեք հիպոգլիկեմիայի կամ հիպերգլիկեմիայի ախտանիշները: Ինքնուրույն մի կատարեք զգալի փոփոխություններ ձեր թերապիայում: Եթե ձեր ցուցադրվող գլյուկոզայի ցուցանիշը չի համապատասխանում ձեր ինքնազգացողությանը՝

1. անցեք գլյուկոզայի ցուցանիշի ստուգման այլընտրանքային մեթոդին,
2. եթե ախտանիշները դեռ չեն համապատասխանում գլյուկոզայի ցուցանիշին, խորհրդակցեք Ձեզ բուժող բժշկի հետ:

Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Ընդհանուր խնդիրների վերացում» բաժինը:

**ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑ****Լուրջ վնասի ռիսկ**

Վնասված սենսորը կարող է ճիշտ չաշխատել: Եթե սենսորը ենթարկվում է հարվածի (օրինակ՝ գնդակի հարված), արտաքինից գննեք այն վնասումներից խուսափելու համար: Եթե նկատում եք որևէ անսովոր բան, հեռացրեք սենսորը և տեղադրեք նորը:

**ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑ****Լուրջ վնասի ռիսկ**

Օգտագործեք ձեր հեռախոսը միայն այնպես, ինչպես խորհուրդ է տալիս արտադրողը (օրինակ՝ մի՛ օգտագործեք վնասված կամ ձևափոխված սարք): Կասկածի դեպքում կապվեք ձեր հեռախոսի արտադրողի ընկերության հետ:

Համոզվեք, որ բաց չեք թողնում ցածր կամ շատ բարձր գլյուկոզայի ցուցանիշների դրվագները: Պարբերաբար բացեք բջջային հավելվածը՝ ձեր գլյուկոզայի մակարդակը ստուգելու համար՝ համաձայն Ձեզ բուժող բժշկի հրահանգների, կամ եթե զգում եք, որ ձեր գլյուկոզայի մակարդակը կարող է ցածր կամ բարձր լինել: Երբեք մի՛ անտեսեք ցածր կամ բարձր արյան գլյուկոզայի ախտանիշները:

Պահպանեք ձեր ամենօրյա հիգիենան, բայց խուսափեք չափից շատ օճառի և շամպունի շփումը սենսորի հետ: Օգտագործեք նվազագույն քանակությամբ օճառ՝ սենսորը մաքուր պահելու համար:

Մի՛ քսեք մաշկի խնամքի և հիգիենիկ միջոցներ (միջատներից պաշտպանող միջոց, արևապաշտպան քուլք և այլն) սենսորի կամ տեղադրման վայրի վրա: Այդ միջոցները կարող են վնասել սենսորը կամ կաչուն հիմքը:

Ձեր մարմինը կարող է արձագանքել սենսորին կամ կաչուն հիմքին: Պարբերաբար ստուգեք տեղադրման տեղամասը՝ մաշկի գրգռման կամ բորբոքման նշաններից խուսափելու համար: Կասկածի դեպքում, կամ եթե տեղադրման տեղամասը բորբոքվում է կամ առաջանում են մաշկային այլ ռեակցիաներ (օրինակ՝ ավերգիա, Էկզեմա), անմիջապես հանեք սենսորը և խորհրդակցեք Ձեզ բուժող բժշկի հետ:

Եթե կաչուն հիմքի արտաքին եզրերը թեթևակի պոկվում են մաշկից, սենսորը դեռ կշարունակի ճիշտ աշխատել: Սակայն եթե սենսորի տակի կաչուն հիմքի որևէ հատված պոկվում է մաշկից, մի՛ փորձեք նորից կացնել այն կամ ժապավենով ամրացնել մաշկին: Նորից կացված սենսորը կարող է ճիշտ չաշխատել: Փոխարենը տեղադրեք նոր սենսոր:

Եթե սենսորն ընկնում է, մի՛ փորձեք կրկին օգտագործել այն: Նորից տեղադրված սենսորը կարող է ճիշտ չաշխատել: Փոխարենը տեղադրեք նոր սենսոր:

## **4. Հավելվածի օգտագործումը**

### **4.1. Հավելվածի օգտագործման նախապայմանները**

#### **Պահանջվող պարագաներ**

- Ձեզ անհրաժեշտ է Accu-Chek SmartGuide սարք, որը բաղկացած է ապլիկատորից և սենսորից:  
Առանձնահատուկ ուշադրություն դարձրեք սարքի հետ տրվող ներդիր-թերթիկում առկա անվտանգությանն առնչվող ողջ տեղեկատվությանը:
- Հավելվածը գործարկելու համար Ձեզ անհրաժեշտ է iOS կամ Android ՕՏ-ով հեռախոս:  
Համատեղելի հեռախոսների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք <https://tools.accu-chek.com/documents/dms/index.html> հղումով:

#### **Պահանջվող հաշիվներ**

- iOS սարքերում հավելվածը ներբեռնելու համար Ձեզ անհրաժեշտ է Apple ID:
- Android սարքերում հավելվածը ներբեռնելու համար Ձեզ անհրաժեշտ է Google օգտահաշիվ:
- Հավելվածը կարգավորելու համար Ձեզ անհրաժեշտ է Accu-Chek օգտահաշիվ:
- Accu-Chek օգտահաշիվ ստեղծելու համար Ձեզ անհրաժեշտ է անձնական էլեկտրոնային փոստի հասցե:

#### **Համակարգի պահանջները**

Դուք կարող եք օգտագործել հավելվածը միայն այն դեպքում, եթե համակարգի պահանջները բավարարված են:

Համակարգի պահանջները տեսնելու համար այցելեք <https://tools.accu-chek.com/documents/dms/index.html> հղումով:

Նախքան Ձեր հեռախոսի ՕՏ-ի նոր տարբերակի թարմացնելը, համոզվեք, որ հավելվածը համատեղելի է ՕՏ-ի նոր տարբերակի հետ: Կասկածների դեպքում ստուգեք համատեղելի սարքերի ցանկը՝ <https://tools.accu-chek.com/documents/dms/index.html>: Եթե դեռ օգնության կարիք ունեք, կապ հաստատեք հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ:

### **4.2. Հավելվածի ներբեռնումը և հեռացումը**

#### **Հավելվածի ներբեռնումը**

Երբ Ձեր հեռախոսն օգտագործում եք հավելվածի հետ, այն դառնում է բժշկական համակարգի մաս: Տե՛ս «Անվտանգության մասին ընդհանուր տեղեկատվություն» գլուխը:

Հավելվածը տեղադրելու համար Ձեզանից որևէ հատուկ գիտելիք չի պահանջվում:

1. Ձեր հեռախոսի տեսախցիկի հավելվածով սկանավորեք Accu-Chek SmartGuide սարքի փաթեթավորման վրայի QR կոդը: Եթե չէք կարողանում սկանավորել QR կոդը, անցեք <https://go.roche.com/smartguideapp> հղումով:

✓ Դուք կուղղորդվեք Ձեր հեռախոսի համար համապատասխան ներբեռնման էջ:

2. Ներբեռնեք հավելվածը՝ հետևելով Ձեր հեռախոսի հրահանգներին:

✓ Դուք ներբեռնեցիք հավելվածը Ձեր հեռախոսում:

## **Հավելվածի հեռացումը**

### **ՆԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ**

Հավելվածն հեռացնելիս կջնջվեն հավելվածի կողմից հավաքագրված ԳՇՄ (CGM) բոլոր տվյալները:

Նկատի ունեցեք, որ հավելվածն օգտագործելիս Ձեր ԳՇՄ տվյալները միշտ ուղարկվում են Ձեր Accu-Chek օգտահաշիվ:

#### *iOS սարքեր*

1. Սեղմեք և պահեք հավելվածի նշանը:
2. Սեղմեք «Հեռացնել հավելվածը» (Remove App) կոճակին:
3. Հաստատելու համար սեղմեք «Ջնջել հավելվածը» (Delete App), ապա՝ «Ջնջել» (Delete) կոճակներին:  
✓ Դուք հեռացրեցիք հավելվածը:

#### *Android սարքեր*

1. Սեղմեք Play Store-ի նշանին:
2. Սեղմեք վերևի աջ անկյունում գտնվող պրոֆիլի նշանին:
3. Սեղմեք «Կառավարել հավելվածներն ու սարքերը» (Manage apps & devices) «Կառավարել» (Manage):
4. Սեղմեք հավելվածի նշանին:
5. Սեղմեք «Ապատեղադրել» (Uninstall) կոճակին:  
✓ Դուք հեռացրեցիք հավելվածը:

#### 4.3. Հավելվածի գործարկումը և փակումը

### **Հավելվածի գործարկումը**

Հավելվածը գործարկելու համար սեղմեք Ձեր հեռախոսի վրա գտնվող հավելվածի նշանին:

## ՃԱՆՈՒԹՅՈՒՆ

Քանի դեռ հավելվածը գործում է, Android սարքերը ծանուցումների տողում ցուցադրում են հավելվածի ծանուցումը:

### Հավելվածը փակելը

Խորհուրդ չի տրվում փակել հավելվածը: Եթե փակեք հավելվածը, այն այլևս Ձեր սենսորից գլուկոզայի ցուցանիշներ չի ստանա:

Եթե անհրաժեշտ է փակել հավելվածը, գործեք հետևյալ կերպ.

1. Սկզբից դիտեք Ձեր հեռախոսում գործող բոլոր հավելվածները:
2. Հավելվածը փակելու համար այն Էկրանից սահեցնելով հեռացրեք:  
✓ Հավելվածը փակվում է:

#### 4.4. Նավիգացիոն տարրեր

Հետևյալ նավիգացիոն տարրերը ցուցադրվում են Էկրանի վերին մասում:

- Սեղմեք (←) նշանին՝ նախորդ Էկրան վերադառնալու համար:
- Սեղմեք (X) նշանին՝ Էկրանը փակելու համար:

Հետևյալ նավիգացիոն տարրերը ցուցադրվում են Էկրանի ստորին մասում:



1. **Գլխավոր էջի նշան:** Սեղմեք՝ Գլխավոր Էկրան մուտք գործելու համար:
2. **Գրանցամատյանի նշան:** Սեղմեք՝ գրանցամատյան մուտք գործելու և առկա գրառումները թերթելու համար:
3. **Գրառում ավելացնելու նշան:** Սեղմեք՝ Ձեր գրանցամատյանում նոր գրառում ավելացնելու համար:
4. **Գրաֆիկների նշան:** Սեղմեք՝ Ձեր ԳԾՄ տվյալների գրաֆիկներն ու վիճակագրությունը տեսնելու համար:
5. **Մենյուի նշան:** Սեղմեք՝ լրացուցիչ մենյու մուտք գործելու համար, ինչպիսիք են սենսորի, թերապիայի կամ հավելվածի կարգավորումները:

## 5. Աշխատանքի սկիզբ

Երբ առաջին անգամ եք գործարկում հավելվածը, այն Ձեզ կուղղորդի կարգավորման հետևյալ գործընթաց՝

### Քայլ 1/5

Մուտք գործեք Ձեր Accu-Chek օգտահաշվի տվյալներով կամ ստեղծեք նոր օգտահաշիվ:

Ձեր Accu-Chek օգտահաշվի մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Accu-Chek օգտահաշիվ» գլուխը:

### Քայլ 2/5

Գլյուկոզայի ցուցանիշների և ածխաջրերի չափման միավորները նախապես ընտրվում են հավելվածի կողմից:

Նախապես ընտրված չափման միավորները կախված են այն երկրից, որն ընտրում եք օգտահաշվի ստեղծման ժամանակ: Նախքան դրանք հավելվածում փոխելը, Ձեր չափման միավորների մասին հարցրեք Ձեզ բուժող բժշկին:

Ընտրեք չափման նույն միավորը, որը Ձեր արյան մեջ գլյուկոզայի չափիչ սարքն օգտագործում է գլյուկոզայի ցուցանիշների համար: Կարող եք ընտրել հետևյալ ցուցանիշներից.

- մգ/դլ (mg/dL)
- մմոլ/լ (mmol/L)

Ընտրեք այն չափման միավորը, որն օգտագործում եք ածխաջրերի հաշվարկի համար: Կարող եք ընտրել հետևյալ ցուցանիշներից.

- գ (գրամ)
- ՅՄ (հացի միավոր, 1 ՅՄ-ն հավասար է 12 գ)
- ԱՄ (ածխաջրի միավոր, 1 ԱՄ-ն հավասար է 10 գ)
- ԱԸ (ածխաջրի ընտրանք, 1 ԱԸ-ն հավասար է 15 գ)

## ՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Դուք կարող եք ընտրել չափման միավորները միայն մեկ անգամ:

Եթե սխալմամբ սխալ չափման միավոր եք ընտրել, անհրաժեշտ է ապատեղադրել և վերատեղադրել հավելվածը: Երբ նորից գործարկեք հավելվածը, կարող եք կրկին ընտրել չափման միավորը:

Շարունակելու համար սեղմեք «Չաջորդը» (Next) կոճակին:

### Քայլ 3/5

Մուտքագրեք Ձեր թիրախային միջակայքի վերին և ստորին ցուցանիշները: Այս ցուցանիշներն օգտագործվում են գրաֆիկների և վիճակագրության համար:

Թիրախային միջակայքն այն տիրույթն է, որտեղ պետք է լինեն Ձեր գլուկոզայի ցուցանիշները: Հավելվածի գրաֆիկներում թիրախային միջակայքը ցուցադրվում է որպես կանաչ տարածք:

Թիրախային միջակայքը կարող է տարբեր լինել յուրաքանչյուր անհատի համար: Քննարկեք Ձեր անհատական թիրախային միջակայքի կարգավորումները Ձեզ բուժող բժշկի հետ:

### ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Թիրախային միջակայքի ցուցանիշները ահազանգեր կամ ծանուցումներ չեն ակտիվացնում:

### Թիրախային միջակայքի լռելյայն ցուցանիշները

| Թիրախային վերին ցուցանիշ  | Թիրախային ստորին ցուցանիշ |
|---------------------------|---------------------------|
| 180 մգ/դլ կամ 10.0 մմոլ/լ | 70 մգ/դլ կամ 3.9 մմոլ/լ   |

Շարունակելու համար սեղմեք «Հաջորդը» (Next) կոճակին:

### Քայլ 4/5

Մուտքագրեք Ձեր սահմանաչափերը գլուկոզայի շատ բարձր և ցածր ցուցանիշների ահազանգերի համար: Հավելվածը կարող է Ձեզ զգուշացնել, եթե Ձեր գլուկոզայի ցուցանիշները չափազանց բարձրանան կամ իջնեն: Գլուկոզայի բոլոր ահազանգերը լռելյայն ակտիվ են, բայց կարող եք դրանք անջատել հավելվածի Մենյուից:

### Գլուկոզայի լռելյայն ահազանգերը

| Գլուկոզայի շատ բարձր ցուցանիշի ծանուցում | Գլուկոզայի ցածր ցուցանիշի ծանուցում |
|--|-------------------------------------|
|--|-------------------------------------|

|                           |                         |
|---------------------------|-------------------------|
| 250 մգ/դլ կամ 13.9 մմոլ/լ | 70 մգ/դլ կամ 3.9 մմոլ/լ |
|---------------------------|-------------------------|

Ձեր անվտանգության համար գլյուկոզայի շատ ցածր մակարդակի սահմանաչափը հնարավոր չէ խմբագրել: Գլյուկոզայի շատ ցածր մակարդակի սահմանաչափը 54 մգ/դլ կամ 3.0 մմոլ/լ է:

Շարունակելու համար սեղմեք «Հաջորդը» (Next) կոճակին:

**Քայլ 5/5**

Գլյուկոզայի բոլոր ահազանգերը լռելյայն ակտիվ են, բայց կարող եք դրանք անջատել հավելվածի Մենյուից: Համոզվելու համար, որ ստանում եք գլյուկոզայի ցուցանիշներ և ծանուցումներ, ծանոթացեք Ձեր հեռախոսի աշխատանքին և պարբերաբար ստուգեք դրա կարգավորումները.

- ԳՃՄ (CGM) հավելվածը գործում է:
- Հավելվածի ծանուցումները միացված են:
- Էներգախնայողության ռեժիմները անջատված են:
- Ձայնի բարձրությունը բարձր է:
- Չանգի ձայնը միացված է:
- «Չանհանգստացնել» կամ «Կենտրոնացում» ռեժիմները անջատված են:
- Ինքնաթիռի ռեժիմը անջատված է:
- Bluetooth ծառայությունը միացված է:
- Ձեր հեռախոսը Ձեզ մոտ է:

Ձեր հեռախոսը ճիշտ կարգավորելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Ձեր հեռախոսի կարգավորումը» գլուխը:

Շարունակելու համար սեղմեք «Հասկանալի է» (I Understand) կոճակին:

## **iOS սարքեր**

Եթե օգտագործում եք iOS սարք, Ձեզ կհարցնեն, թե արդյոք հավելվածին թույլատրվա՞ծ է ծանուցումներ ուղարկել:

Եթե հավելվածին թույլ չտրվի ուղարկել ծանուցումներ, հավելվածի բոլոր ծանուցումներն ու ահազանգերը կարգելափակվեն:

- Սեղմեք «Թույլատրել» (Allow) կոճակին:

Ձեզ կհարցնեն, թե արդյոք հավելվածին թույլատրվա՞ծ է ուղարկել Կրիտիկական ծանուցումներ (Critical Alerts): Կրիտիկական ծանուցումների գործառույթն ազդում է ահազանգերի ձայնի վրա, եթե Ձեր զանգի ձայնն անջատված է: Եթե հավելվածին թույլ չտրվի ուղարկել Կրիտիկական ծանուցումներ, հավելվածի բոլոր ծանուցումներն ու ահազանգերը կանջատվեն, երբ Ձեր հեռախոսում միացնեք «Չանհանգստացնել» կամ «Կենտրոնացում» ռեժիմը:

1. Սեղմեք «Հաջորդը» (Next) կոճակին:
2. Սեղմեք «Թույլատրել» (Allow) կոճակին:

Անհրաժեշտության դեպքում կարող եք այս կարգավորումները փոխել ավելի ուշ:

Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Ձեր հեռախոսի կարգավորումը» գլուխը:

## **Android սարքեր**

Եթե օգտագործում եք Android սարք, Ձեզ կարող են հարցնել, թե արդյոք հավելվածին թույլատրվա՞ծ է ծանուցումներ ուղարկել: Եթե հավելվածին թույլ չտրվի ուղարկել ծանուցումներ, Դուք չեք կարողանա անտեսել «Չանհանգստացնել» ռեժիմը:

- Սեղմեք «Թույլատրել» (Allow) կոճակին:

Ձեզ կհարցնեն, թե արդյոք հավելվածին թույլատրվա՞ծ է աշխատել ֆոնային ռեժիմում: Եթե հավելվածին թույլ չտրվի աշխատել ֆոնային ռեժիմում, Դուք կարող եք չստանալ գլյուկոզայի ցուցանիշներ, ծանուցումներ կամ ահազանգեր:

- Սեղմեք «Թույլատրել» (Allow) կոճակին:

Ձեզ կհարցնեն, թե արդյոք հավելվածին թույլատրվա՞ծ է անտեսել «Չանհանգստացնել» ռեժիմը: Եթե հավելվածին թույլ չտրվի անտեսել «Չանհանգստացնել» ռեժիմը, հավելվածի բոլոր ծանուցումներն ու ահազանգերը կանջատվեն, երբ Ձեր հեռախոսում միացնեք «Չանհանգստացնել» ռեժիմը:

1. Սեղմեք «Հաջորդը» (Next) կոճակին:
2. Միացրեք «Չանհանգստացնել» ռեժիմի անտեսումը (Do Not Disturb Override):

Այս կարգավորումը կարող է տարբերվել՝ կախված Ձեր հեռախոսի ՕՋ-ի տարբերակից և արտադրողից:

Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Ձեր հեռախոսի Օգտագործողի ձեռնարկը:

Անհրաժեշտության դեպքում կարող եք այս կարգավորումները փոխել ավելի ուշ: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Ձեր հեռախոսի կարգավորումը» գլուխը:

## 6. Ձեր հեռախոսի կարգավորումը

### 6.1. Ընդհանուր պահանջներ

#### Հեռախոսի խնամքը

Ձեր սենսորի հետ հաղորդակցությունը կարող է մեծացնել Ձեր հեռախոսի մարտկոցի օգտագործումը: Համոզվեք, որ Ձեզ մոտ ունեք հեռախոսը լիցքավորելու միջոցներ:

Սենսորի և հավելվածի միջև կապի հաճախակի կորուստը կարող է նվազեցնել սենսորի մարտկոցի աշխատանքի տևողությունը: Ձեր սենսորը և հեռախոսը միմյանց մոտ պահեք:

Մի՛ օգտագործեք հավելվածը ճաքած կամ վնասված Էկրանով հեռախոսի վրա: Եթե Էկրանը ճաքած կամ վնասված է, հնարավոր է՝ չկարողանաք տեսնել այն ամենը, ինչ ցուցադրվում է: Հավելվածն օգտագործեք միայն պատշաճ գործող հեռախոսի վրա:

Հավելվածն օգտագործեք միայն այնպիսի հեռախոսների վրա, որոնց վստահում եք: Ոչ պաշտոնական հավելվածները կարող են չկարդալ և չուղարկել տեղեկատվություն ԳՇՄ (CGM) հավելվածի և սենսորի միջև: Ոչ պաշտոնական հավելվածները կարող են նաև բացասաբար ազդել ԳՇՄ (CGM) հավելվածի վրա:

Նույն հեռախոսում գործարկեք միայն վստահելի աղբյուրներից ստացված հավելվածներ: Bluetooth-ի թույլտվություններ տվեք միայն վստահելի հավելվածներին, քանի որ ոչ պաշտոնական հավելվածը կարող է կարդալ և ուղարկել տեղեկատվություն ԳՇՄ (CGM) հավելվածի և սենսորի միջև:

Մի՛ օգտագործեք ԳՇՄ (CGM) հավելվածը ոչ պաշտոնական փոփոխությունների ենթարկված (jailbroken/rooted) հեռախոսի վրա: Մի՛ օգտագործեք ԳՇՄ (CGM) հավելվածը հեռախոսի վրա, որը գտնվում է կարգաբերման (debug) կամ մշակողի (developer) ռեժիմում: Այս ամենը կարող են ձեր հեռախոսը դարձնել ոչ անվտանգ:

### 6.2. Հասանելիության պաշտպանություն

#### Տվյալների պաշտպանություն

Պաշտպանեք ձեր հավելվածի տվյալները չարտոնված մուտքից կամ ոչ պատշաճ օգտագործումից: Օգտագործեք ձեր հեռախոսի կամ ՕՅ-ի անվտանգության հնարավորությունները, օրինակ՝ գաղտնաբառով պաշտպանությունը: Ձեր գլուկոզայի բոլոր տվյալները նաև գաղտնագրված և պաշտպանված են ձեր Accu-Chek հաշվում՝ Roche Diabetes Care-ի Cloud պահեստում:

#### Հեռախոսի պաշտպանություն

Ցանկացած դք, ով մուտք ունի հավելված, կարող է չափաբերման ցուցանիշներ մուտքագրել ձեր սենսորի համար և փոփոխել գրանցամատյանը կամ հավելվածի կարգավորումները: Սխալ չափաբերման ցուցանիշները կարող են նվազեցնել սենսորի ճշգրտությունը:

Պաշտպանեք հավելվածը երրորդ անձանց մուտքից: Թույլատրեք մուտքը միայն վստահելի խնամակալներին:

- Ձեր հեռախոսը մի՛ տվեք ուրիշներին, այդ թվում՝ երեխաներին:
- Ձեր հեռախոսի անվտանգության կարգավորումներում ակտիվացրեք Էկրանի բլոկավորում:
- Կարգավորեք Էկրանի բլոկավորումն այնպես, որ այն որոշակի ժամանակ անգործությունից հետո ինքնաշխատ եղանակով բլոկավորի ձեր հեռախոսը:

### **Օգտահաշվի պաշտպանություն**

Ձեր Accu-Chek օգտահաշվի տվյալները գաղտնի պահեք: Մի՛ կիսվեք ձեր օգտահաշվի տվյալներով ուրիշների հետ, եթե նրանք ձեր խնամակալները չեն:

Եթե փոխում եք հեռախոսը կամ դադարում եք օգտագործել այն, դուրս եկեք ձեր Accu-Chek օգտահաշվից:

Եթե ստիպված եք ձեր հեռախոսը տրամադրել մեկ այլ անձի (բացի ձեր վստահելի խնամակալից), դուրս եկեք ձեր Accu-Chek օգտահաշվից: Այնուամենայնիվ, փորձեք խուսափել նման իրավիճակներից: Եթե դուրս գաք օգտահաշվից, կդադարեք ստանալ ահազանգեր, ծանուցումներ և ցուցանիշներ ձեր սենսորից: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Օգտահաշվից դուրս գալը» բաժինը:

Պաշտպանեք ձեր հեռախոսը հավելվածների և ՕՐ-ի չարտոնված փոփոխություններից: Չամոզվեք, որ հավելվածների խանութից (օրինակ՝ App Store կամ Google Play) տեղադրումների համար պահանջվում է գաղտնաբառ:

Ձեր Apple կամ Google օգտահաշվի գաղտնաբառի կարգավորումները փոխելու վերաբերյալ տեղեկությունների համար տե՛ս ձեր հավելվածների խանութի հրահանգները:

Ձեր Accu-Chek օգտահաշվի գաղտնաբառի կարգավորումները փոխելու համար անցեք Մենյու > Օգտահաշիվ > Կառավարել օգտահաշիվը (Menu > Account > Manage Account):

### **6.3. Ծանուցումների կարգավորումներ**

ՕՐ-ի որոշ կարգավորումներ կարող են ազդել ծանուցումների և ահազանգերի վրա: Ուստի կարևոր է, որ պարբերաբար ստուգեք այդ կարգավորումները ձեր հեռախոսում:

Եթե ձեր հեռախոսին սենսորից բացի միացնում եք այլ սարքեր (օրինակ՝ Apple Watch), դա կարող է ազդել ծանուցումների և ահազանգերի կարգավորումների վրա: Նախապես ծանոթացեք միացված մյուս սարքերի աշխատանքին և համոզվեք, որ դրանք չեն փոփոխում սույն Օգտագործողի ձեռնարկում նկարագրված ծանուցումների և ահազանգերի կարգավորումները:

Ծանուցումներն ու ահազանգերը պատշաճ կերպով ստանալու համար հավելվածը պետք է միշտ աշխատի: Հավելվածի աշխատանքը կախված է նրանից, թե այն գտնվում է ակտիվ (երբ բաց է Էկրանին), թե ֆոնային ռեժիմում: Երբ հավելվածն ակտիվ է, բոլոր ծանուցումներն ու ահազանգերը ցուցադրվում են ձեր հեռախոսի Էկրանին՝ առանց ձայնի կամ թրթռման: Երբ հավելվածն աշխատում է ֆոնային ռեժիմում (օրինակ՝ երբ օգտագործում եք այլ հավելված), այն օգտագործում է ՕՐ-ի ծանուցումները՝ ծանուցումներ և ահազանգեր ուղարկելու համար: Ծանուցումները կաշխատեն՝ համաձայն ձեր սահմանած կարգավորումների: Թրթռումը, ձայնը և ազդանշանների տեսողական ցուցադրումը կախված են ձեր ծանուցումների կարգավորումներից:

Դուք, ձեր խնամակալները կամ հավելվածն օգտագործելու թույլտվություն ունեցող այլ անձինք պետք է տեղյակ լինեն ծանուցումներ և ահազանգեր ստանալու կարգավորումներին:

## **ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ**

Որոշ կարգավորումներ և դրանց համապատասխան նշանները կարող են տարբերվել՝ կախված ՕՐ-ի տարբերակից և ձեր հեռախոսի արտադրողից: Այդ կարգավորումների մասին մանրամասն տեղեկությունների և համապատասխան նշաններին ծանոթանալու համար տե՛ս ձեր հեռախոսի Օգտագործողի ձեռնարկը:

## **Հավելվածի ծանուցումների կարգավորումները**

Եթե հավելվածին թույլ չտրվի ուղարկել ծանուցումներ, հավելվածի բոլոր ծանուցումներն ու ահազանգերը կարգելափակվեն:

- Համոզվելու համար, որ հավելվածը կարող է ուղարկել ծանուցումներ և ահազանգեր, միացրեք հավելվածի ծանուցումները ձեր հեռախոսի համակարգի կարգավորումներում:
- Այդ գործողության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս ձեր հեռախոսի Օգտագործողի ձեռնարկը:

Որոշ իրադարձություններ, օրինակ՝ հեռախոսը կամ սենսորը գցելը, կարող են ազդել ծանուցումների և ահազանգերի վրա: Պարբերաբար ստուգեք ձեր հեռախոսի, սենսորի և ՕՐ-ի աշխատանքը: Բացի այդ, պարբերաբար ստուգեք ձեր ՕՐ-ի ծանուցումների կարգավորումները:

## **«Չանհանգստացնել» և «Կենտրոնացում» ռեժիմներ**

Եթե «Չանհանգստացնել» կամ «Կենտրոնացում» ռեժիմները միացված են, հավելվածի ծանուցումներն ու ահազանգերն անջատվում են, երբ ձեր հեռախոսը բլոկավորված է: Այդ ռեժիմների ակտիվ լինելը նշվում է կարգավիճակի տողում:

- Հավելվածի ծանուցումներն ու ահազանգերն այս ռեժիմներում ստանալու համար ակտիվացրեք «Կրիտիկական ծանուցումներ» (iOS) կամ «Չանհանգստացնել» ռեժիմի անտեսում (Android) գործառույթը:
- Կարող եք նաև Accu-Chek SmartGuide հավելվածն ավելացնել թույլատրված հավելվածների ցանկում:
- Այս կարգավորումները կարող են տարբերվել՝ կախված ՕՐ-ի տարբերակից և ձեր հեռախոսի արտադրողից: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս ձեր հեռախոսի Օգտագործողի ձեռնարկը:

## **Ձայնի բարձրություն**

Ձայնի չափազանց ցածր մակարդակը կարող է խանգարել լսել հավելվածի ծանուցումներն ու ահազանգերը: Կախված ՕՐ-ի տարբերակից և հեռախոսից՝ կարող են լինել զանգի և ծանուցումների ձայնի բարձրության առանձին կարգավորումներ:

Որոշ Android սարքեր անջատման նշան ցուցադրում են միայն այն դեպքում, եթե զանգի ձայնի բարձրությունն է սահմանված 0, բայց ոչ այն դեպքում, երբ ծանուցումների ձայնի բարձրությունն է 0: Նման սարքերի դեպքում անջատման նշան չի ցուցադրվում, նույնիսկ եթե ահազանգերը լսելի չեն:

- Սահմանեք ձայնի բարձրությունն այնպես, որ լսեք բոլոր ծանուցումներն ու ահազանգերը:

- Որոշ հեռախոսներ թույլ են տալիս սահմանել ձայնի տարբեր մակարդակներ: Կարող եք ձայնի մակարդակը սահմանել շրջակա աղմուկի մակարդակից բարձր: Համոզվեք, որ կարող եք լսել ծանուցումները ձեր գտնվելու վայրում:
- Այս կարգավորումները կարող են տարբերվել՝ կախված ՕՅ-ի տարբերակից և ձեր հեռախոսի արտադրողից: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս ձեր հեռախոսի Օգտագործողի ձեռնարկը:

## **Bluetooth անլար տեխնոլոգիա**

Եթե Bluetooth-ն անջատված է, հավելվածը չի կարող կապ հաստատել ձեր սենսորի հետ: Սովորաբար, նշանը մոխրագույն է դառնում, երբ Bluetooth-ն անջատված է: Այս նշանը կարող է տարբերվել՝ կախված ՕՅ-ի տարբերակից և ձեր սարքի արտադրողից:

- Համոզվելու համար, որ հավելվածը կարող է կապ հաստատել ձեր սենսորի հետ, ստուգեք, որ Bluetooth-ը միացված է:
- Այս կարգավորումը և համապատասխան նշանը կարող են տարբերվել՝ կախված ՕՅ-ից և սարքի արտադրողից: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս ձեր հեռախոսի Օգտագործողի ձեռնարկը:

## **Ինքնաթիռի ռեժիմ**

- Եթե ինքնաթիռի ռեժիմը միացված է, Bluetooth-ն ինքնաշխատ եղանակով անջատվում է, և հավելվածը չի կարող կապ հաստատել ձեր սենսորի հետ: Այս ռեժիմի ակտիվ լինելը նշվում է կարգավիճակի տողում: Համոզվելու համար, որ հավելվածը կարող է կապ հաստատել ձեր սենսորի հետ նույնիսկ ինքնաթիռի ռեժիմում, կրկին միացրեք Bluetooth-ը:
- Այս կարգավորումը և համապատասխան նշանը կարող են տարբերվել՝ կախված ՕՅ-ից և սարքի արտադրողից: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս ձեր հեռախոսի Օգտագործողի ձեռնարկը:

## **Էներգախնայողության ռեժիմ**

Եթե Էներգախնայողության ռեժիմը միացված է, որոշ ֆոնային գործընթացներ անջատվում են՝ ձեր հեռախոսի մարտկոցի լիցքը խնայելու համար: Այս ռեժիմի ակտիվ լինելը նշվում է կարգավիճակի տողում: Էներգախնայողության ռեժիմը նաև ազդում է ձեր սենսորի հետ կապի վրա:

## **ՄԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ**

Որոշ հեռախոսների արտադրողներ անջատում են ֆոնային գործընթացները նույնիսկ այն դեպքում, երբ Էներգախնայողության ռեժիմն անջատված է:

- Համոզվելու համար, որ հավելվածը կարող է կապ հաստատել ձեր սենսորի հետ, անջատեք Էներգախնայողության ռեժիմը:

- Այս կարգավորումը և համապատասխան նշանը կարող են տարբերվել՝ կախված ՕՋ-ից և սարքի արտադրողից: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս ձեր հեռախոսի Օգտագործողի ձեռնարկը:

### **Լրացուցիչ սարքեր (աքսեսուարներ)**

Ձեր հեռախոսին միացված լրացուցիչ սարքերը (աքսեսուարները) կարող են ազդել ծանուցումների և ահազանգերի վրա: Օրինակ՝

- Եթե ականջակալները միացված են ձեր հեռախոսին, բայց դուք դրանք չեք կրում, հնարավոր է՝ չլսեք ծանուցումներն ու ահազանգերը:
- Խելացի ժամացույց միացնելուց հետո ձեր կարգավորումները կարող են փոխվել:

Աքսեսուարներ, ինչպիսիք են ականջակալները, բարձրախոսները կամ խելացի ժամացույցները, օգտագործելիս համոզվեք, որ շարունակում եք տեղեկանալ հավելվածի ուղարկած ահազանգերի և ծանուցումների մասին:

## 7. Սենսորի գուգակցում

Դուք պետք է ձեր սենսորը գուգակցեք հեռախոսի հետ, հակառակ դեպքում հավելվածը չի կարողանա սենսորից գլուկոզայի ցուցանիշ ստանալ:

Սենսորը գուգակցեք միայն անվտանգ, վստահելի վայրում: Սա կնվազեցնի ձեր սենսորին այլ մարդկանց միանալու ռիսկը:

Նախքան սենսորի գուգակցումը սկսելը, կապույտ պտտվող կափարիչի պիտակից վերցրեք սերիական համարը և 6-նիշանոց PIN կոդը:

- Գտեք ձեր սենսորի 6-նիշանոց PIN կոդը PIN բառի կողքին:
- Գտեք ձեր սենսորի սերիական համարը SN նշանի կողքին:

Չուգակցում հնարավոր է կատարել նաև այն դեպքում, երբ արդեն ունեք գուգակցված և դեռևս ակտիվ սենսոր:

Երբ գուգակցում եք նոր սենսոր, ձեր ընթացիկ սենսորի գործողության ժամկետն ավարտվում է:

Այստեղ ներկայացված թվերը միայն օրինակ են:



**Ինչպես գուգակցել սենսորը**

Դուք կարող եք նոր սենսորի գուգակցում սկսել 3 եղանակով.

- Եթե երբեք սենսոր չեք գուգակցել հավելվածի հետ, հավելվածն ինքնաբերաբար կառաջարկի նոր սենսոր գուգակցել:
- Եթե ձեր սենսորի ժամկետը լրանա, հավելվածն ինքնաբերաբար կառաջարկի նոր սենսոր գուգակցել:
- Եթե ցանկանում եք նոր սենսոր գուգակցել ձեռքով՝ մինչև ընթացիկ սենսորի ժամկետի ավարտը, սեղմեք Մենյու > Կառավարել CGM սենսորը > Չուգակցել նոր սենսոր:
  1. Համոզվեք, որ ձեր հեռախոսի Bluetooth-ը միացված է:
  2. Սեղմեք «Չուգակցել այժմ», եթե սա ձեր առաջին սենսորն է, կամ սեղմեք «Չուգակցել նոր սենսոր»՝ սենսորը փոխարինելիս:
  3. Տեղադրեք սենսորը ձեր մարմնի վրա: Եթե օգնության կարիք ունեք, սեղմեք «Դիտել ձեռնարկը»:
  4. Սեղմեք «Հաջորդ»:
  5. Սեղմեք «Որոնել»՝ ձեր սենսորը գտնելու համար: Հավելվածը ցուցադրում է մոտակայքում գտնվող բոլոր սենսորները, սակայն սովորաբար հայտնաբերվում է միայն մեկ սենսոր:
  6. Ընտրեք այն սենսորը, որի սերիական համարը համապատասխանում է կապուլյտ պատվող կափարիչի պիտակի վրայի համարին:
  7. Պատրաստ պահեք ձեր 6-նիշանոց PIN կոդը, որը գտնվում է կապուլյտ պատվող կափարիչի պիտակի վրա:
  8. Սեղմեք «Հաջորդ»:
    - ✓ Էկրանին կհայտնվի Bluetooth-ով գուգակցման հարցում:
  9. Մուտքագրեք ձեր 6-նիշանոց PIN կոդը:

## ՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Համոզվեք, որ ճիշտ եք մուտքագրում PIN կոդը: PIN կոդը բաղկացած է ուղիղ 6 թվանշանից: Ուշադիր եղեք, որ այլ թիվ չմուտքագրեք (օրինակ՝ սերիական համարը): PIN կոդը երբեք չի լինի 000000 կամ 123456: Ձեր սենսորի սերիական համարն ընտրելուց հետո յուրաքանչյուր քայլ կատարեք արագ: Եթե դադար տաք կամ ուշանաք, PIN կոդի մուտքագրման համար նախատեսված ժամանակը կարող է սպառվել:

10. Սեղմեք «Չուգակցել»՝ հարցումը հաստատելու համար:

11. Սեղմեք «OK»:

## ՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Տեղադրվելուց հետո սենսորը պետք է որոշակի ժամանակ ակտիվանա, նախքան CGM տվյալներ ցուցադրելը և չափաբերվելու հնարավորությունը: Սա կոչվում է տաքացման (warm-up) շրջան:

✓ Ձեր սենսորն այժմ գուլգակցված է հավելվածի հետ: Նոր սենսոր տեղադրելուց հետո անհրաժեշտ է 1 ժամ տաքացման համար: Այդ ընթացքում հավելվածում գլուկոզայի ցուցանիշներ չեն ցուցադրվում: Ձեռքի տակ ունեցեք գլուկոզայի մակարդակը ստուգելու այլընտրանքային միջոց: Հավելվածը պահանջում է օգտատիրոջ կողմից չափաբերում՝ գլուկոզայի այնպիսի ցուցանիշներ ցուցադրելու համար, որոնք կարող են օգտագործվել բուժման վերաբերյալ որոշումներ կայացնելու համար (օրինակ՝ ինսուլինի դեղաչափի ընտրություն):

Եթե հավելվածը չի գտնում ձեր սենսորը, տե՛ս «Ընդհանուր անսարքությունների վերացում» բաժինը:

Պահպանեք 6-նիշանոց PIN կոդն անվտանգ վայրում՝ կանխելու համար դրան այլ անձանց հասանելիությունը: Նաև պահեք այն, եթե անհրաժեշտ լինի սենսորը գուլգակցել այլ հեռախոսի հետ:

Եթե դեն եք նետում կապույտ պտտվող կափարիչը մինչև սենսորի ժամկետի ավարտը, համոզվեք, որ 6-նիշանոց PIN կոդն անընթեռնելի է: Սա նվազեցնում է հավանականությունը, որ մեկ այլ անձ կգուլգակցի ձեր սենսորն իր հեռախոսի հետ:

## 8. Սենսորի չափաբերում

Ձեր սենսորի չափաբերումը թույլ է տալիս օգտագործել CGM-ի տվյալները բուժմանն առնչվող որոշումներ (օրինակ՝ ինսուլինի դեղաչափի որոշում) կայացնելու համար և բարձրացնում է դրանց ճշգրտությունը: Դուք չափաբերում եք սենսորը՝ հավելվածում մուտքագրելով ձեր գլյուկոմետրով ստացված գլյուկոզայի ընթացիկ ցուցանիշը: Հավելվածը ձեզ կհուշի դա անել օգտագործման առաջին օրվա ընթացքում:

Գոյություն ունի CGM-ի տվյալների 2 ռեժիմ՝ Միտումների ռեժիմ և Թերապիայի ռեժիմ: Սենսորի ընթացիկ ռեժիմը նշվում է Գլխավոր Էկրանին՝ CGM-ի տվյալի անմիջապես տակ:

Երբ սենսորը Միտումների ռեժիմում է.

- CGM-ի տվյալները չպետք է օգտագործվեն բուժմանն առնչվող որոշումներ (օրինակ՝ ինսուլինի դեղաչափի որոշում) կայացնելու համար:
- CGM-ի տվյալները կարող են օգտագործվել միայն միտումները դիտարկելու համար՝ որպես ընդհանուր բնույթի տեղեկանք:
- Բուժմանն առնչվող որոշումներ կայացնելու համար չափեք արյան գլյուկոզայի մակարդակը գլյուկոմետրով:

Երբ սենսորը Թերապիայի ռեժիմում է.

- CGM-ի տվյալները կարող են օգտագործվել բուժմանն առնչվող որոշումներ (օրինակ՝ ինսուլինի դեղաչափի որոշում) կայացնելու համար:

Սենսորի գլյուկոզայի չափումներն ավելի ճշգրիտ են, եթե դուք չափաբերում եք այն պահին, երբ ձեր արյան գլյուկոզայի մակարդակը համեմատաբար կայուն է:

Մի՛ չափաբերեք ուտելուց, ինսուլինի ներարկումից կամ ֆիզիկական ակտիվությունից անմիջապես հետո և խուսափեք շատ տաք, շատ ցուրտ կամ ջերմաստիճանի արագ փոփոխություններով միջավայրերից:

### Չափաբերումը բաղկացած է երկու քայլից.

1-ժամյա տաքացման (warm-up) շրջանից հետո սենսորն անցնում է Միտումների ռեժիմի և յուրաքանչյուր 5 րոպես մեկ CGM-ի տվյալներ է ուղարկում հավելվածին: Մի՛ օգտագործեք այս սկզբնական ցուցանիշները բուժմանն առնչվող որոշումներ կայացնելու համար: Սենսորի տեղադրումից 12 ժամ հետո հավելվածը ձեզ կառաջարկի կատարել չափաբերում:

**Քայլ 1:** Կատարեք արյան գլյուկոզայի չափում և մուտքագրեք ցուցանիշը հավելվածում: Սենսորը կանցնի Թերապիայի ռեժիմի: Այժմ CGM-ի տվյալները կարող են օգտագործվել բուժմանն առնչվող որոշումներ կայացնելու համար:

**Քայլ 2:** 30 րոպեից 3 ժամ անց կատարեք ևս մեկ չափում և մուտքագրեք

ցուցանիշը հավելվածում՝ առաջին չափումը հաստատելու համար: Նշում. Եթե երկրորդ քայլը բաց թողնեք, սենսորը կվերադառնա Միտումների ռեժիմ:

Այսքանով սենսորի չափաբերումն ավարտված է:

### **Ձեր սենսորը չափաբերելու համար.**

1. Չափեք ձեր արյան գլյուկոզայի մակարդակը գլյուկոմետրով՝ արտադրողի հրահանգներին համապատասխան:
2. Ձեր Գլխավոր Էկրանին սեղմեք «Չափաբերել հիմա» կոճակը:
3. Չափաբերման Էկրանին մուտքագրեք գլյուկոմետրով ստացված արյան գլյուկոզայի ցուցանիշը: Ցուցանիշը պետք է մուտքագրվի չափումը կատարելուց հետո 3 րոպեի ընթացքում:
4. Սեղմեք «Պահպանել» կոճակը:
5. Ստուգեք, որ բջջային հավելվածում մուտքագրել էք նույն ցուցանիշը, որը ցուցադրվել է գլյուկոմետրի վրա, և սեղմեք «Հաստատել» կոճակը: Եթե պատահաբար սխալ ցուցանիշ էք մուտքագրել, սեղմեք «Չեղարկել» և մուտքագրեք ճիշտ ցուցանիշը:

✓ Ձեր սենսորը չափաբերված է:


Եթե չափաբերումը ձախողվի, սպասեք մոտ 15-30 րոպե և կրկնեք գործընթացը: Գործընթացը կրկնելիս օգտագործեք գլյուկոմետրով ստացված նոր ցուցանիշը:

Համակարգի արդյունավետությունը չի կարող երաշխավորվել, եթե չափաբերման համար օգտագործվում է սխալ ցուցանիշ:

Եթե դուք հաստատում եք սխալ չափաբերման ցուցանիշ, այն հնարավոր չէ ջնջել: Հանեք սենսորը և տեղադրեք նորը:

## 9. Գլխավոր Էկրան

Գլխավոր Էկրանը հավելվածի կենտրոնական Էկրանն է և ցուցադրում է տարբեր տեղեկություններ:





**1. Ընթացիկ գլուկոզայի ցուցանիշ:** Թվային ցուցադրում և միտումների սլաք, որը ցույց է տալիս գլուկոզայի ցուցանիշների փոփոխության ուղղությունը.

- ↑ Արագ աճում է
- ↗ Աճում է
- → Կայուն է
- ↘ Նվազում է
- ↓ Արագ նվազում է

## 2. Չափման միավոր

## 3. Սենսորի ռեժիմ` «Միտումների ռեժիմ» կամ «Թերապիայի ռեժիմ»:

## 4. Ահագանգերի և ծանուցումների կարգավիճակ:

- (նշան չկա) ծանուցումների կարգավորումներն օպտիմալ են:
-  նշանակում է, որ կա չընթերցված հաղորդագրություն այն մասին, որ կարգավորումներն օպտիմալ չեն: Սեղմեք նշանին` հաղորդագրությունն ընթերցելու և կարգավորումները փոխելու համար:
-  նշանակում է, որ հաղորդագրությունն ընթերցվել է, բայց կարգավորումները դեռ օպտիմալ չեն: Կրկին սեղմեք նշանին` կարգավորումները փոխելու համար:

## 5. Անցում դեպի Accu-Chek SmartGuide Predict հավելված:

**6. Հիմնական գրաֆիկ:** Ցուցադրում է գլյուկոզայի ցուցանիշները վերջին 3 ժամվա ընթացքում:

**7. Հաղորդագրությունների դաշտ:** Ցուցադրում է ընթացիկ իրադարձությունների մասին կարևոր տեղեկություններ, օրինակ` նոր սենսորի տաքացման շրջանի մնացորդային ժամանակը:

## ՆԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Երբ CGM-ի տվյալը դուրս է սարքի չափման տիրույթից (400 մգ/դլ-ից բարձր կամ 40 մգ/դլ-ից ցածր), հավելվածը թվային ցուցանիշի փոխարեն կցուցադրի HI (ԲԱՐՁՐ) կամ LO (ՑԱԾՐ):

## 10. Գրանցամատյան

Գրանցամատյանի յուրաքանչյուր գրառում կարող է պարունակել հետևյալ տեղեկությունները.

- Իրադարձության ամսաթիվ և ժամ
- Գլուկոզայի ցուցանիշը գլյուկոմետրից
- Ածխաջրերի քանակ
- Ինսուլինի միավորներ (բոլյուսային և բազալային)
- Նշումներ

### Գրառում ավելացնելը

Սեղմեք «Ավելացնել գրառում»:

✓ «Նոր գրառում» Էկրանին

սեղմեք այն դաշտին, որը ցանկանում եք խմբագրել: Գրառումը պահպանելու համար պետք է լրացնեք առնվազն մեկ դաշտ:

Սեղմեք «Պահպանել»:

✓ Դուք նոր գրառում ավելացրիք: Այն կցուցադրվի Գլխավոր Էկրանի հաղորդագրությունների դաշտում առաջիկա 4 ժամվա ընթացքում:

### Գրառում խմբագրելը

1. Սեղմեք «Գրանցամատյան»:

2. Սեղմեք ցանկացած գրառման վրա:

3. Սեղմեք այն դաշտերին, որոնք ցանկանում եք խմբագրել:

4. Սեղմեք «Պահպանել»:

✓ Ձեր փոփոխությունները պահպանվեցին:

## ՆԱՆՈՒԹՅՈՒՆ

Դուք չեք կարող խմբագրել այն գրառումները, որոնք պարունակում են գլյուկոզայի ցուցանիշներ և օգտագործվել են սենսորի չափաբերման համար:

### Գրառում ջնջելը

1. Սեղմեք «Գրանցամատյան»:

2. Սեղմեք ցանկացած գրառման վրա:

3. Սեղմեք «Ջնջել գրառումը»:

4. Հաստատեք, որ ցանկանում եք ջնջել գրառումը:

✓ **Գրառումը ջնջվեց գրանցամատյանից:**

## **ՆԱԼՈԹՈՒԹՅՈՒՆ**

Դուք չեք կարող ջնջել այն գրառումները, որոնք պարունակում են գլյուկոզայի ցուցանիշներ և օգտագործվել են սենսորի չափաբերման համար:

## **11. Գրաֆիկներ և վիճակագրություն**

### **11.1 Ընդհանուր տեղեկություններ**

Ձեր CGM-ի տվյալների վերլուծությունը Ձեզ բուժող բժշկի հետ կարող է օգնել հասկանալու ձեր գլյուկոզայի կառավարման ընթացքը և բացահայտելու բուժման հնարավոր ճշգրտման ուղղությունները: Գրաֆիկներն ու վիճակագրությունն արժեքավոր գործիքներ են, որոնք կօգնեն ձեզ բարելավել գլյուկոզայի կառավարումը:

Հասանելի են հետևյալ գրաֆիկները.

- Միտումների գրաֆիկ
- Ժամանակը տիրույթներում
- Վիճակագրություն

### **11.2 Միտումների գրաֆիկ**

Միտումների գրաֆիկը Գլխավոր Էկրանի ընդլայնված տարբերակն է, որը ներառում է նաև ձեր գրանցամատյանի գրառումները: Դուք կարող եք դիտել ձեր CGM-ի տվյալների 6, 12 կամ 24-ժամյա տեսքը:

Սահեցրեք աջ՝ ավելի հին ցուցանիշները տեսնելու համար, կամ սեղմեք օրացույցի կոճակին՝ որոշակի ամսաթվի անցնելու համար:

Սեղմեք գրաֆիկի նշաններին՝ լրացուցիչ տեղեկատվություն տեսնելու համար



Նշումներ




աժխաջրեր



Բազալ ինսուլինի ներարկումներ

 ԲՈՒՆԱՅԻՆ ԻՆՏՈՒԼԻՆԻ ՆԵՐԱՐԿՈՒՄՆԵՐ



1. Օրացույցի կոճակ. Թույլ է տալիս ընտրել որոշակի ամսաթիվ:
- 2 Նշում է, որ ցուցադրվում է միտումների գրաֆիկը. սեղմեք՝ այլ գրաֆիկ ընտրելու համար:
- 3 Ընտրված ժամանակային միջակայք
- 4 Նշումներ
- 5 Ածխաչրեր
- 6 Ընտրված ժամանակային միջակայքում ձեր գլուկոզայի արժեքների գրաֆիկական ներկայացումը:
- 7 ԲՈՒՆԱՅԻՆ և բազալ ինտուլինի ներարկումներ

8 Ընտրեք 6, 12 կամ 24-ժամյա տեսք  
9 Սեղմեք՝ միտումների գրաֆիկի վերաբերյալ ավելի շատ տեղեկություններ  
տեսնելու համար:

Ձեր միտումների գրաֆիկը դիտելու համար.

1. Սեղմեք «Գրաֆիկներ»:
2. Բացվող ցանկից ընտրեք «միտումների գրաֆիկ»:
3. Ընտրեք ցանկալի ժամանակային միջակայքը


6 ժամ

12 ժամ

24 ժամ

### **11.3 Ժամանակը միջակայքում (Time in Range)**

«Ժամանակը միջակայքում» գրաֆիկը ցույց է տալիս, թե ձեր գլուկոզային ցուցանիշների քանի տոկոսն է եղել 5 տիրույթներից (Շատ բարձր, Բարձր, Թիրախային, Ցածր, Շատ ցածր) յուրաքանչյուրում՝ վերջին 7, 14 կամ 28 օրվա ընթացքում:



1. Ցույց է տալիս, որ ցուցադրվում է «Ժամանակը միջակայքում» գրաֆիկը. սեղմեք՝ այլ գրաֆիկ ընտրելու համար:
2. Ընտրված ժամանակային միջակայք
3. Շատ բարձր. Գյուղոգայի արժեքների տոկոսը, որոնք գերազանցում էին ձեր շատ բարձր գյուղոգայի սահմանը:
4. Գյուղոգայի արժեքների համակցված տոկոսը, որոնք գերազանցում էին ձեր բարձր/շատ բարձր գյուղոգայի ցուցանիշին:
5. Բարձր. Գյուղոգայի արժեքների տոկոսը, որոնք գերազանցում էին ձեր նպատակային միջակայքը, բայց ցածր էին ձեր շատ բարձր գյուղոգայի սահմանից:


6. Միջակայքում. Գլուկոզայի արժեքների տոկոսը, որոնք գտնվում էին ձերնպատակային միջակայքում:
7. Ցածր. Գլուկոզայի արժեքների տոկոսը, որոնք ցածր էին ձեր նպատակային միջակայքից, բայց բարձր էին ձեր շատ ցածր գլուկոզայի սահմանից:
8. Գլուկոզայի արժեքների համակցված տոկոսը, որոնք ցածր էին ձեր ցածր/շատ ցածր գլուկոզայի սահմանից:
9. Շատ ցածր. Գլուկոզայի արժեքների տոկոսը, որոնք ցածր էին ձեր շատ ցածր գլուկոզայի սահմանից:
10. Ժամանակի տևողությունը, որի ընթացքում ձեր գլուկոզայի մակարդակը ցածր էր ձեր շատ ցածր գլուկոզայի սահմանից:
11. Ընտրեք 7, 14 կամ 28-օրյա դիտում:
12. Սեղմեք՝ «Ժամանակը միջակայքում» գրաֆիկի վերաբերյալ ավելի շատ տեղեկություններ տեսնելու համար

Ձեր «Ժամանակը միջակայքում» գրաֆիկը դիտելու համար.

1. Սեղմեք «Գրաֆիկներ»:
2. Բացվող ցանկից ընտրեք «Ժամանակը միջակայքում»:
3. Ընտրեք ցանկալի ժամանակային միջակայքը
  - 7 օր
  - 14 օր
  - 28 օր

#### 11.4 Վիճակագրություն

Վիճակագրության հաշվետվությունը ներկայացնում է ձեր բուժման և գլուկոզայի ցուցանիշների հիմնական ցուցանիշները՝ վերջին 7, 14 կամ 28 օրվա ընթացքում:



1. Նշում է, որ ցուցադրվում է վիճակագրության գրաֆիկը. սեղմեք՝ այլ գրաֆիկ ընտրելու համար:
2. Ընտրված ժամանակահատված
3. Գյուլոզայի միջինացված ցուցանիշը ընտրված ժամանակահատվածի համար, երբ ձեր սենսորը ակտիվ է եղել ընտրված ժամանակահատվածում:
4. Գյուլոզայի կառավարման ցուցիչ (ԳԿՑ): Հաշվարկվում է միջին գյուլոզայի հիման վրա և գնահատում է ձեր HbA1c-ն ընտրված ժամանակահատվածում:
5. Գյուլոզայի փոփոխականություն: Ցույց է տալիս գյուլոզայի ցուցանիշների տատանումների աստիճանը:
6. Ակտիվ օրեր. Առաջին և վերջին գյուլոզայի չափման միջև ընկած օրերի քանակը ընտրված ժամանակահատվածում:

7. Սենսորը կրելու և այն ակտիվ լինելու ժամանակի տոկոսը ընտրված ժամանակահատվածում:

8. Ընտրեք 7, 14 կամ 28-օրյա տեսք:

9. Սեղմեք՝ վիճակագրության գրաֆիկի վերաբերյալ ավելի շատ տեղեկություններ տեսնելու համար:

Ձեր վիճակագրությունը դիտելու համար.

1. Սեղմեք «Գրաֆիկներ»:
2. Բացվող ցանկից ընտրեք «վիճակագրություն»:
3. Ընտրեք ցանկալի ժամանակային միջակայքը

7օր

14 օր

28 օր

## 12. Սենսորի կառավարում

«Կառավարել CGM սենսորը» Էկրանն օգտագործվում է ձեր CGM սեանսը (գլյուկոզայի շարունակական մոնիթորինգի ժամանակահատվածը) կառավարելու համար:

Էկրանի սանդղակը ցույց է տալիս ձեր սենսորի ժամկետի ավարտին մնացած ժամանակը:

Ձեր սենսորը կառավարելու համար.

1. Սեղմեք «Մենյու»:

2. Սեղմեք «Կառավարել CGM սենսորը»:

✓ Այս Էկրանից կարող եք դիտել սենսորի կարգավիճակը, զուգակցել Նոր սենսոր կամ դիտել սենսորի հեռացման ձեռնարկը:

- Նոր սենսոր զուգակցելու համար սեղմեք «Չուգակցել Նոր սենսոր»: Դուք կարող եք դա անել, նույնիսկ եթե ընթացիկ սենսորի ժամկետը դեռ չի լրացել:
- Սենսորի հեռացման ձեռնարկը դիտելու համար սեղմեք «Սենսորի հեռացման ձեռնարկ»:

## 13. Թերապիայի կարգավորումներ

### 13.1 Գլուկոզայի ահազանգեր

Հավելվածը կարող է Ձեզ զգուշացնել, եթե Ձեր գլուկոզայի ցուցանիշները դառնան շատ բարձր, ցածր կամ շատ ցածր: Հասանելի են գլուկոզայի հետևյալ ահազանգերը.

- Շատ բարձր գլուկոզայի ահազանգը զգուշացնում է, երբ Ձեր գլուկոզայի ցուցանիշը գերազանցում է շատ բարձր գլուկոզայի սահմանաչափը:
- Ցածր գլուկոզայի ահազանգը զգուշացնում է, երբ Ձեր գլուկոզայի ցուցանիշն իջնում է ցածր գլուկոզայի սահմանաչափից:
- Շատ ցածր գլուկոզայի ահազանգը զգուշացնում է, երբ Ձեր գլուկոզայի ցուցանիշն իջնում է 54 մգ/դլ-ից կամ 3 մմոլ/լ-ից: Ձեր անվտանգության համար շատ ցածր գլուկոզայի սահմանաչափը հնարավոր չէ փոփոխել:

Դուք կստանաք միայն մեկ ահազանգ, երբ Ձեր գլուկոզայի ցուցանիշը գերազանցի շատ բարձր սահմանաչափը կամ իջնի ցածր սահմանաչափից: Սակայն Դուք կշարունակեք ստանալ ահազանգ յուրաքանչյուր 5 րոպեն մեկ, քանի դեռ Ձեր գլուկոզայի ցուցանիշը մնում է շատ ցածր սահմանաչափից ցածր: Դուք կարող եք նաև անջատել ահազանգը՝ այն այլևս չստանալու համար:

Գլուկոզայի ահազանգերն ակտիվ են օրը 24 ժամ, բացառությամբ այն դեպքերի, երբ միացված են քնի ահազանգերը: Քնի ահազանգերը թույլ են տալիս սահմանել տարբեր ահազանգային մակարդակներ գիշերվա ընթացքում: Այսպիսով, ահազանգերը ձեզ անտեղի չեն անհանգստացնի քնի ժամանակ:

Գլուկոզայի բոլոր ահազանգերը լռելյայն ակտիվ են, սակայն Դուք կարող եք դրանք անջատել հավելվածի Մենյուից:

Գլուկոզայի ահազանգերը կարգավորելու համար կատարեք հետևյալ քայլերը.

1. Սեղմեք Մենյուին:
2. Սեղմեք Գլուկոզայի ահազանգերին:
3. Սեղմեք փոխարկման կոճակներին՝ ցանկալի ահազանգերը միացնելու կամ անջատելու համար: Երբ միացնում եք քնի ահազանգերը, Դուք կարող եք 15 րոպե ընդմիջումներով կարգավորել Քնելու ժամանակը (սկիզբ) և Արթնանալու ժամանակը (ավարտ):

### **ՃԱՆՈՒԹՅՈՒՆ**

Եթե միացնեք գլուկոզայի որևէ ահազանգ, ինքնաբերաբար կմիանա նաև կապի կորստի ահազանգը: Տե՛ս «Սենսորի հետ կապի կորստի ահազանգ» բաժինը:

1. Մուտքագրեք յուրաքանչյուր ահազանգի սահմանաչափերը:  
Լռելյայն ցուցանիշների մասին տեղեկությունների համար տե՛ս  
«Աշխատանքի սկիզբ» գլուխը:

## **ՆԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ**

Ձեր գլուկոզայի ահազանգերի թույլատրելի սահմանաչափերի վրա կարող է ազդել Ձեր նպատակային միջակայքի կարգավորումները: Օրինակ, եթե Ձեր նպատակային միջակայքը սահմանված է որոշակի տիրույթում, Դուք չեք կարող սահմանել Ձեր ցածր գլուկոզայի սահմանաչափն ավելի բարձր՝ առանց բարձրացնելու նպատակային միջակայքի ստորին ցուցանիշները:

2. Սեղմեք Պահպանել կոճակին:

### 13.2 Նպատակային միջակայք

Նպատակային միջակայքն այն տիրույթն է, որի սահմաններում պետք է լինեն Ձեր գլուկոզայի ցուցանիշները: Հավելվածի գրաֆիկներում նպատակային միջակայքը ցուցադրվում է կանաչ գոտով:

Նպատակային միջակայքը կարող է տարբեր լինել յուրաքանչյուր անհատի համար: Քննարկեք Ձեր անհատական նպատակային միջակայքի կարգավորումները Ձեզ բուժող բժշկի հետ:

## **ՆԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ**

Նպատակային միջակայքի ցուցանիշները չեն առաջացնում ահազանգեր կամ ծանուցումներ:

## **ՆԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ**

Նպատակային միջակայքի թույլատրելի ցուցանիշների վրա կարող են ազդել Ձեր գլուկոզայի ահազանգերի կարգավորումները: Օրինակ, եթե Ձեր ցածր գլուկոզայի ահազանգը սահմանված է որոշակի սահմանաչափի վրա, Դուք չեք կարող իջեցնել Ձեր նպատակային միջակայքի ստորին ցուցանիշը՝ առանց իջեցնելու Ձեր ցածր գլուկոզայի ահազանգի սահմանաչափը:

Նպատակային միջակայքը կարգավորելու համար կատարեք հետևյալ քայլերը.

1. Սեղմեք Մենյուին:
2. Սեղմեք Նպատակային միջակայքին:

### 3. Մուտքագրեք Ձեր նպատակային միջակայքի վերին և ստորին ցուցանիշները:

Եթե Ձեր չափման միավորը սահմանված է մգ/դլ.

◦ Լռելյայն վերին նպատակային ցուցանիշը 180 մգ/դլ է (կարող եք մուտքագրել 90 մգ/դլ-ից 300 մգ/դլ միջակայքում):

◦ Լռելյայն ստորին նպատակային ցուցանիշը 70 մգ/դլ է (կարող եք մուտքագրել 60 մգ/դլ-ից 140 մգ/դլ միջակայքում):

Եթե Ձեր չափման միավորը սահմանված է մմոլ/լ.

◦ Լռելյայն վերին նպատակային ցուցանիշը 10.0 մմոլ/լ է (կարող եք մուտքագրել 5.0 մմոլ/լ-ից 16.7 մմոլ/լ միջակայքում):

◦ Լռելյայն ստորին նպատակային ցուցանիշը 3.9 մմոլ/լ է (կարող եք մուտքագրել 3.3 մմոլ/լ-ից 7.8 մմոլ/լ միջակայքում):

### 4. Սեղմեք Պահպանել կոճակին:

#### 13.3 Չափման միավոր

Հավելվածի համար չափման միավորները նախապես ընտրված են՝ հիմնվելով Ձեր երկրում տարածված միավորների վրա:

Անվտանգության նկատառումներից ելնելով՝ Դուք կարող եք ընտրել գլյուկոզայի ցուցանիշների և ածխաջրերի չափման միավորները միայն մեկ անգամ՝ նախնական կարգավորման ժամանակ: Դրանից հետո Դուք կարող եք միայն տեսնել ընտրված չափման միավորները: Եթե սխալմամբ ընտրել եք ոչ ճիշտ չափման միավոր, անհրաժեշտ է ապատեղադրել և վերատեղադրել հավելվածը: Երբ նորից գործարկեք հավելվածը, կարող եք կրկին ընտրել չափման միավորը:

Ընտրված չափման միավորները դիտելու համար կատարեք հետևյալ քայլերը.

1. Սեղմեք Մենյուին:

2. Սեղմեք Չափման միավորին:

✓ Կցուցադրվեն չափման միավորները, որոնք Դուք ընտրել եք առաջին անգամ օգտագործելիս:

## 14. **Չավելվածի կարգավորումներ**

### 14.1 Սենսորի ժամկետի սպառման մասին հիշեցումներ

Չավելվածը կարող է Ձեզ հիշեցնել, թե երբ է անհրաժեշտ փոխել Ձեր CGM սենսորը:

Ժամկետի սպառման մասին հիշեցումները միացնելու կամ անջատելու համար կատարեք հետևյալ քայլերը.

1. Սեղմեք Մենյուին:
2. Սեղմեք Սենսորի ժամկետի սպառման մասին հիշեցումներին:
3. Սեղմեք փոխարկման կոճակներին՝ ցանկալի հիշեցումները միացնելու կամ անջատելու համար:

Սենսորի ժամկետի սպառման մասին հիշեցումները լռելյայն միացված են:

### 14.2 Սենսորի հետ կապի կորստի ահազանգ

Եթե Ձեր սենսորի հետ կապը կորչի, Դուք այլևս չեք ստանա գլյուկոզայի ցուցանիշներ կամ ահազանգեր, մինչև կապը վերականգնվի: Սենսորը կպահպանի տվյալները 8 ժամվա ընթացքում՝ հավելվածին դրանք փոխանցելու անհնարինության դեպքում: Տվյալների կորստից խուսափելու համար սենսորը պետք է տվյալները փոխանցի մինչև սենսորի մարտկոցի սպառվելը:

Չավելվածը կարող է Ձեզ զգուշացնել, երբ կորչում է կապը Ձեր CGM սենսորի հետ: Սա թույլ է տալիս Ձեզ ձեռնարկել համապատասխան քայլեր՝ կապը վերականգնելու համար:

Դուք կարող եք բաց թողնել գլյուկոզայի շատ բարձր, ցածր կամ շատ ցածր դրվագները, եթե կապի կորստի ահազանգն անջատված է:

Ձեր սենսորի հետ կապը վերականգնելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Ընդհանուր խնդիրների վերացում» բաժինը:

Կապի կորստի ահազանգը լռելյայն միացված է:

## **ԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Կապի կորստի ահազանգն ինքնաշխատ եղանակով միանում է, երբ միացնում եք գլյուկոզայի ահազանգերից որևէ մեկը:

Կապի կորստի ահազանգը միացնելու կամ անջատելու համար կատարեք հետևյալ քայլերը.

1. Սեղմեք Մենյուին:

2. Սեղմեք Կապի կորստի ահազանգին:

3. Սեղմեք փոխարկման կոճակին` Կապի կորստի ահազանգը միացնելու կամ անջատելու համար: Եթե անջատեք այս ահազանգը, կհայտնվի ծանուցում, որը տեղեկացնում է, որ եթե Ձեր սենսորի հետ կապը կորչի, Դուք գլուկոզայի ահազանգեր չեք ստանա: Հաստատելու համար, որ ցանկանում եք անջատել Կապի կորստի ահազանգը, սեղմեք Անջատել կոճակին: Եթե ցանկանում եք չեղարկել այս գործողությունը, սեղմեք Չեղարկել կոճակին:

## **15. Օգտահաշվի կարգավորումներ**

Ձեր օգտահաշվի կարգավորումներում Դուք կարող եք կառավարել Ձեր Accu-Chek օգտահաշիվը, գաղտնիության կարգավորումները, դուրս գալ օգտահաշվից կամ ջնջել Ձեր Accu-Chek օգտահաշիվը:

Գաղտնիության կարգավորումները կառավարելու համար կատարեք հետևյալ քայլերը.

1. Սեղմեք Մենյուին:
2. Սեղմեք օգտահաշիվ բաժնին:
3. Սեղմեք Գաղտնիության կարգավորումներին:
4. Օգտագործեք փոխարկման կոճակները՝ Ձեր համաձայնությունը տալու կամ հետ կանչելու համար:

### **ՆԱԼՈԹՈՒԹՅՈՒՆ**

Եթե հետ կանչեք պարտադիր համաձայնությունը, Դուք այլևս չեք կարողանա օգտագործել հավելվածը:

Ձեր Accu-Chek օգտահաշվից դուրս գալու մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Accu-Chek օգտահաշիվ» գլուխը:

## 16. Accu-Chek օգտահաշիվ

### 16.1 Օգտահաշվի ստեղծում

Եթե Դուք չունեք Accu-Chek օգտահաշիվ, կարող եք ստեղծել նոր օգտահաշիվ՝ օգտագործելով Ձեր Էլ, փոստի հասցեն:

1. Մուտքի Էկրանին սեղմեք Ստեղծել օգտահաշիվ կոճակին:
2. Լրացրեք տեքստային դաշտերը և սեղմեք Յաջորդը կոճակին:
3. Կարդացեք գաղտնիության և իրավական տեղեկությունները: Նշեք վանդակները, ապա սեղմեք Ստեղծել կոճակին՝ պայմաններին համաձայնելու համար:
  - ✓ Յաստատման նամակ կուղարկվի Ձեր Է, փոստի հասցեին:
4. Բացեք հաստատման նամակը Ձեր Էլփոստի մուտքի արկղում: Եթե հաստատման նամակ չեք ստացել, ստուգեք Ձեր <<Spam>> թղթապանակը: Յաստատման նամակը կրկին ստանալու համար հավելվածում սեղմեք Վերաուղարկել նամակը կոճակին:
5. Յաստատման նամակում սեղմեք Յաստատել կոճակին:
6. Բացված վեբ Էջում սեղմեք Մուտք գործել կոճակին:
  - ✓ Ձեր Accu-Chek օգտահաշիվը պատրաստ է:

### 16.2 Մուտք գործելը

Ձեր Accu-Chek օգտահաշիվ մուտք գործելու համար կատարեք հետևյալ քայլերը.

1. Սեղմեք Մուտք գործել կոճակին:
  2. Մուտքագրեք Ձեր Accu-Chek օգտահաշվի Էլփոստի հասցեն և գաղտնաբառը:
  3. Սեղմեք Մուտք գործել կոճակին:
- ✓ Այժմ Դուք մուտք եք գործել:

### 16.3 Օգտահաշվից դուրս գալը

#### ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Այս հավելվածն օգտագործելու համար Դուք պետք է մուտք գործեք Ձեր Accu-Chek օգտահաշիվ: Եթե դուրս գաք օգտահաշվից, Դուք չեք ստանա գլուկոզայի ցուցանիշներ կամ ահազանգեր:

Ձեր Accu-Chek օգտահաշվից դուրս գալու համար կատարեք հետևյալ քայլերը.

1. Սեղմեք Մենյուին:
2. Սեղմեք օգտահաշիվ բաժնին:

3. Սեղմեք Դուրս գալ կոճակին:

✓ Այժմ Դուք դուրս եք եկել:

#### **16.4 Օգտահաշվի ջնջում**

Ձեր Accu-Chek օգտահաշիվը ջնջելու համար կատարեք հետևյալ քայլերը.

1. Սեղմեք Մենյուին:

2. Սեղմեք օգտահաշիվ բաժնին:

3. Սեղմեք Ջնջել օգտահաշիվը կոճակին:

4. Սեղմեք Ամեն դեպքում ջնջել կոճակին:

✓ Ձեր օգտահաշիվն այժմ ջնջված է:

Նկատի ունեցեք, որ Accu-Chek SmartGuide հավելվածն այլևս հնարավոր չի լինի օգտագործել առանց Accu-Chek օգտահաշվի:

#### 17. CGM-ի տվյալների գնահատում

Ձեր գլյուկոզայի ցուցանիշները կարող են տատանվել՝ կախված մի քանի գործոններից,

- Սնունդ
- Դեղորայք
- Ձեր ընդհանուր առողջական վիճակը
- Սթրեսի մակարդակը
- Ճանապարհորդություն
- Ֆիզիկական ակտիվություն

Այս գործոնների՝ Ձեր գլյուկոզայի ցուցանիշների վրա ունեցած ազդեցության մասին լրացուցիչ տեղեկությունների համար խորհրդակցեք ձեզ բուժող բժշկի հետ:

## 18. Խնդիրների վերացում

### 18.1 Իրադարձությունների մատյան

Իրադարձությունների մատյանը պարունակում է բոլոր իրադարձությունները, որոնք տեղի են ունենում Ձեր սենսորի օգտագործման ընթացքում, և կարող է օգնել խնդիրների վերացմանը: Այդպիսի իրադարձություններ կարող են լինել, օրինակ, բոլոր անցյալ, ընթացիկ և ոչ ակտիվ ազդանշանները:

Իրադարձությունների մատյանը դիտելու համար կատարեք հետևյալ քայլերը.

1. Սեղմեք **Մենյու**ի:
2. Սեղմեք **Իրադարձությունների մատյան**ի:

✓ Կցուցադրվի բոլոր անցյալ իրադարձությունների ցանկը:

### 18.2 Ընդհանուր խնդիրների վերացում

#### **Ի՞նչ անել, եթե հավելվածը չի գտնում Ձեր սենսորը:**

Նոր սենսորը տեղադրելուց հետո զուգակցեք այն 30 րոպեի ընթացքում: 30 րոպե հետո սենսորի զուգակցումն ավելի երկար կտևի՝ մարտկոցի լիցքը խնայելու համար: Եթե հավելվածը չի կարողանում գտնել սենսորը, սեղմեք **Փորձել կրկին** կոճակին և սպասեք, մինչև հավելվածը գտնի Ձեր սենսորը:

Ընդհանուր առմամբ, Դուք պետք է հնարավորինս շուտ զուգակցեք Ձեր սենսորը հավելվածի հետ: Երբ սենսորը վերամիանա հավելվածին, հավելվածը ավտոմատ կերպով կստանա բաց թողնված տվյալները սենսորից:

#### **Ի՞նչ անել, եթե հավելվածը չի ցուցադրում գլուկոզայի ցուցանիշները:**

Հավանաբար, Ձեր սենսորը կորցրել է կապը հավելվածի հետ: ,

Եթե Ձեր սենսորի հետ կապը կորել է, կապը վերականգնելու համար կատարեք հետևյալ քայլերը.

- Համոզվեք, որ Bluetooth անլար տեխնոլոգիայով կապը միացված է:
- Սենսորը կարող է տեղեկատվություն ուղարկել հեռախոսին մինչև 10 մետր (33 ֆուտ) հեռավորության վրա (ուղիղ տեսանելիության դեպքում): Իրական հեռավորությունը կարող է կրճատվել՝ կախված հեռախոսից և Ձեր միջավայրից (օրինակ՝ մոտակա այլ սարքեր):
- Սեղմեք **Մենյու > Իրադարձությունների մատյան** և ստուգեք՝ արդյոք սենսորը ծանուցում կամ ազդանշան է տվել մինչև հավելվածի հետ կապը կորցնելը: Օրինակ, եթե Ձեր սենսորի մարտկոցը սպառվել է, Դուք համապատասխան ծանուցում կգտնեք իրադարձությունների մատյանում:

Իրադարձությունների մատյանը ցույց կտա կապի կորստի ազդանշան միայն այն դեպքում, եթե կապը կորել է ավելի քան 10 րոպեով:

Այլ գործոններ, որոնք կարող են պատճառ դառնալ CGM-ի տվյալների չցուցադրմանը, ներառում են.

- սենսորը տաքանում է
- սենսորը չափազանց տաք է կամ սառը
- CGM սեանսն ավարտվել է / սենսորի ժամկետը սպառվել է
- օգտատերը դուրս է եկել հավելվածից

Հավելվածը ստանում է Ձեր ընթացիկ գլյուկոզայի ցուցանիշը յուրաքանչյուր 5 րոպե մեկ: Եթե հավելվածը չի ցուցադրում գլյուկոզայի ցուցանիշները ավելի քան 20 րոպե՝ առանց իրադարձությունների մատյանում ծանուցում կամ ազդանշան տալու, կապվեք հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ և հեռացրեք սենսորը, եթե այդպիսի ցուցում ստանաք:

### **Ի՞նչ անել, եթե Ձեր գլյուկոզայի ցուցանիշը չի համապատասխանում Ձեր ինքնազգացողությանը:**

Մի անտեսեք ցածր կամ բարձր գլյուկոզայի արժանիքները և մի փոխեք Ձեր թերապիան՝ առանց ձեզ բուժող բժշկի հետ խոսելու: Եթե Ձեր գլյուկոզայի ցուցանիշը չի համապատասխանում Ձեր ինքնազգացողությանը, կատարեք հետևյալ քայլերը.






1. Չափեք Ձեր արյան գլյուկոզան Ձեր գլյուկոմետրով:
2. Կատարեք երկրորդ չափում Ձեր գլյուկոմետրով՝ սխալ թեստի արդյունքը բացառելու համար:
3. Եթե Ձեր գլյուկոմետրի թեստի արդյունքները շարունակաբար չեն համապատասխանում Ձեր ինքնազգացողությանը, խորհրդակցեք ձեզ բուժող բժշկի հետ:

### **Ի՞նչ անել, եթե հավելվածը չի գործարկվում:**

Ամեն անգամ, երբ գործարկում եք հավելվածը, այն կատարում է իր տվյալների բազայի ամբողջականության ստուգում: Եթե հավելվածը հայտնաբերի որևէ վնասված տվյալ, այն անվտանգության նկատառումներից ելնելով ինքնաբերաբար կփակվի: Այդ դեպքում Դուք այլևս չեք կարող օգտագործել հավելվածը: Այս դեպքում անցեք Ձեր գլյուկոզան ստուգելու այլընտրանքային մեթոդի և կապվեք հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ:


#### 18.3 Ծանուցումների տեսակները


Հավելվածն օգտագործում է տարբեր տեսակի ծանուցումներ՝ Ձեզ տեղեկացնելու Ձեր սենսորի կարգավիճակի, սխալների կամ սպասվող սպասարկման մասին: Այդ ծանուցումներն են.


-  Սխալի մասին հաղորդագրություններ
-  Սպասարկման մասին հաղորդագրություններ
-  Ձգուշացումներ
-  Տեղեկատվություն
-  Հիշեցումներ


Եթե սենսորը կորցրել է կապը Ձեր հեռախոսի հետ, Դուք այլևս ծանուցումներ չեք ստանա Ձեր սենսորից:


### 18.3.1 Սխալի մասին հաղորդագրություններ

 **Հայտնաբերվել է «Jailbreak» (iOS սարքեր):** Ձեր սարքը «jailbreak» է արված: Անվտանգության և գաղտնիության նկատառումներից ելնելով՝ Դուք չեք կարող օգտագործել հավելվածն այս հեռախոսի վրա:

 **Հայտնաբերվել է «Root» արված սարք (Android սարքեր):** Ձեր սարքը «root» է արված: Անվտանգության և գաղտնիության նկատառումներից ելնելով՝ Դուք չեք կարող օգտագործել հավելվածն այս հեռախոսի վրա:

 **Սենսորը դադարել է աշխատել:** Խնդրում ենք ոչնչացնել Ձեր օգտագործված CGM սենսորը: Տեղադրեք նոր սենսոր և սեղմեք **Զուգակցել նոր սենսորը** կոճակին:

 **Ծրագրային սխալ:** Հնարավոր է՝ հավելվածը փոփոխվել է: Անվտանգության և գաղտնիության նկատառումներից ելնելով՝ խնդրում ենք ջնջել հավելվածը և վերատեղադրել այն հավելվածների խանութից:

 **Ծրագրային սխալ:** Խնդրում ենք փակել և վերաբացել հավելվածը: Եթե սխալը շարունակվի, կապ հաստատեք հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ:

### 18.3.2 Սպասարկման մասին հաղորդագրություններ

 **Չափաբերումը հասանելի է:**

- (Առաջին չափաբերումից առաջ և առաջին չափաբերումից 3 ժամ հետո).  
Չափաբերեք Ձեր սենսորը, եթե ցանկանում եք օգտագործել CGM-ի

տվյալները թերապևտիկ որոշումներ կայացնելու համար, ինչպիսին է ինսուլինի դոզավորումը:

- (Առաջին չափաբերումից 30 րոպե հետո). Չափաբերեք Ձեր սենսորը մինչև <HH:MM>` Ձեր սենսորը Թերապիայի ռեժիմում պահելու համար:

◇ **Չափաբերումը հասանելի չէ:** Չափաբերումը հասանելի չէ: Սա կարող է պայմանավորված լինել Ձեր գլյուկոզայի կամ սենսորի ջերմաստիճանի արագ փոփոխություններով: Խնդրում ենք փորձել կրկին ավելի ուշ:

◇ **Չափաբերումը ձախողվեց:** Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Ձեր սենսորի չափաբերումը» գլուխը:

◇ **Անսպասելի չափաբերում:** Հավելվածը հայտնաբերել է անսպասելի չափաբերում սենսորի վրա` <date/ time>: Խնդրում ենք հաստատել, որ Դուք եք կատարել այս չափաբերումը:

◇ **Սենսորի ժամկետը սպառվել է:** Խնդրում ենք ոչնչացնել Ձեր օգտագործված CGM սենսորը: Տեղադրեք նոր սենսոր և սեղմեք «**Չուզակցել նոր սենսորը**» կոճակին:

◇ **Սենսորի հետ կապը կորել է:** Հավելվածը չի կարողանում կապ հաստատել Ձեր CGM սենսորի հետ: Համոզվեք, որ Bluetooth-ը ՄԻԱՑՎԱԾ է, և որ Ձեր հեռախոսը մոտակայքում է:

◇ **Սենսորը չափազանց սառն է:** Հավելվածը տվյալներ չի ստանում Ձեր CGM սենսորից, քանի որ սենսորի ջերմաստիճանը չափազանց ցածր է: Խնդրում ենք տեղափոխվել ավելի տաք միջավայր:

◇ **Սենսորը չափազանց տաք է:** Հավելվածը տվյալներ չի ստանում Ձեր CGM սենսորից, քանի որ սենսորի ջերմաստիճանը չափազանց բարձր է: Խնդրում ենք տեղափոխվել ավելի զով միջավայր:

◇ **Սենսորի մարտկոցը լիցքաթափվում է:** Խնդրում ենք ոչնչացնել Ձեր օգտագործված CGM սենսորը: Տեղադրեք նոր սենսոր և սեղմեք «**Չուզակցել նոր սենսորը**» կոճակին:

### 18.3.3 Ձգուշացումներ



#### **Չայտնաբերվել է շատ բարձր գլյուկոզա:**

(Երբ սենսորը Թերապիայի ռեժիմում է). Կառավարեք Ձեր արյան բարձր գլյուկոզան՝ ըստ ձեզ բուժող բժշկի խորհուրդների:

(Երբ սենսորը Միտումների ռեժիմում է). Չաստատեք Ձեր ընթացիկ գլյուկոզայի ցուցանիշը Ձեր գլյուկոմետրով: Եթե այն դեռ շատ բարձր է, կառավարեք Ձեր արյան բարձր գլյուկոզան՝ ըստ ձեզ բուժող բժշկի խորհուրդների:



#### **Չայտնաբերվել է ցածր գլյուկոզա:**

(Երբ սենսորը Թերապիայի ռեժիմում է). Ընդունեք արագ ազդեցության ածխաջրեր (կերեք կամ խմեք)՝ ըստ ձեզ բուժող բժշկի խորհուրդների:

(Երբ սենսորը Միտումների ռեժիմում է). Չաստատեք Ձեր ընթացիկ գլյուկոզայի ցուցանիշը Ձեր գլյուկոմետրով: Եթե այն դեռ ցածր է, ընդունեք գլյուկոզայի ցուցանիշը արագ բարձրացնող ածխաջրեր (կերեք կամ խմեք)՝ ըստ ձեզ բուժող բժշկի խորհուրդների:



#### **Չայտնաբերվել է շատ ցածր գլյուկոզա:**

(Երբ սենսորը Թերապիայի ռեժիմում է). Անմիջապես կերեք կամ խմեք գլյուկոզայի ցուցանիշը արագ բարձրացնող ածխաջրեր՝ ըստ ձեզ բուժող բժշկի խորհուրդների:


(Երբ սենսորը Միտումների ռեժիմում է). Չաստատեք Ձեր ընթացիկ գլյուկոզայի ցուցանիշը Ձեր գլյուկոմետրով: Եթե այն դեռ շատ ցածր է, անմիջապես կերեք կամ խմեք գլյուկոզայի ցուցանիշը արագ բարձրացնող ածխաջրեր՝ ըստ ձեզ բուժող բժշկի խորհուրդների:

### 18.3.4 Տեղեկատվություն



#### **Այժմ ցուցադրվում են միտումների ռեժիմի ցուցանիշները:**

Օգտագործեք այս ցուցանիշները՝ որպես ընդհանուր ուղեցույց: Եթե ցանկանում եք օգտագործել ցուցանիշները թերապևտիկ որոշումներ կայացնելու համար, ինչպիսին է ինսուլինի դեղաչափի որոշումը, կատարեք չափաբերում <HH:MM> հետո:

 **Չափաբերումը շուտով հասանելի կլինի:** Չափաբերեք Ձեր սենսորը <HH:MM> և <HH:MM> միջև՝ այն թերապիայի ռեժիմում պահելու համար:

 **Անսպասելի չափաբերում**

Հավելվածը <date/time>-ից հայտնաբերեց սենսորի վրա անսպասելի չափաբերում:

### 18.3.5 Հիշեցումներ

**Ձեր CGM սենսորի ժամկետը սպառվում է վաղը:**

Փոխարինեք Ձեր CGM սենսորը առաջիկա 24 ժամվա ընթացքում:

Տեղադրեք նոր CGM սենսոր, մինչև Ձեր ընթացիկ սենսորի ժամկետը սպառվի:

**Ձեր CGM սենսորի ժամկետը շուտով կսպառվի:**

Ձեր CGM սենսորը կդադարի աշխատել 2 ժամից:

Ծուտով նոր սենսոր տեղադրելու անհրաժեշտություն կառաջանա :

## 19. Apple Watch-ի օգտագործումը

Եթե Դուք օգտագործում եք iPhone, ապա կարող եք հավելվածն օգտագործել Apple Watch-ի հետ համատեղ: Apple Watch-ը Ձեր iPhone-ին միացնելուց հետո կարող եք դիտել հետևյալ տեղեկությունները Ձեր Apple Watch-ի վրա.

- Գլուկոզայի վերջին ցուցանիշը
- Դինամիկայի սլաքը
- Դինամիկայի գրաֆիկը

Բացի այդ, Դուք ստանում եք սխալի, սպասարկման և նախազգուշացնող բոլոր հաղորդագրությունները, ինչպես նաև հիշեցումները, անմիջապես Ձեր Apple Watch-ի վրա:

### **Բարդություններ**

Բարդությունը տեսողական տարր է, որը կարող եք ավելացնել ձեր Apple Watch-ի ժամացույցի Էկրանին:


Այս տեսողական տարրը կարող է ցուցադրել օգտակար տեղեկատվություն:

Accu-Chek SmartGuide հավելվածի բարդությունը ներառում է հետևյալ տեղեկատվությունը.

- Գլուկոզայի վերջին արժեքը
- Միտման սլաք

## 20. Ձեր սենսորի հեռացումը

1. Սկսեք պոկել կաշուն հիմքը սենսորի հարթ կողմից:



2. Ստուգեք սենսորի հետևի մասը: Համոզվեք, որ սենսորը հեռացնելուց հետո դրա թելիկն ամբողջությամբ հեռացվել է տեղադրման տեղամասից: Ստուգեք տեղադրման տեղամասը մատով կամ տեսողական զննմամբ: Եթե թելիկը մնացել է Ձեր մաշկի մեջ կամ տեղադրման տեղամասում անսովոր զգացողություն կա (օրինակ՝ ցավ, այտուց կամ կարմրություն), խորհրդակցեք ձեզ բուժող բժշկի հետ:

### ՆԱԼՈԹՈՒԹՅՈՒՆ

Տեղադրման տեղամասում անսովոր զգացողությունը կարող է պահպանվել սենսորը հեռացնելուց մի քանի օր հետո: Այս դեպքում խորհրդակցեք ձեզ բուժող բժշկի հետ:

## 21. Տեղեկատվություն ոչնչացման մասին



### ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑ

Վարակի ռիսկ

Կենսաբանական հեղուկների հետ շփված օգտագործված բաղադրիչները կարող են վարակներ փոխանցել:

Ոչնչացրեք օգտագործված սենսորը որպես հնարավոր վարակիչ նյութ՝ համաձայն տեղական օրենսդրության: Օգտագործված բաղադրիչները ճիշտ ոչնչացնելու վերաբյալ տեղեկությունների համար դիմեք Ձեր տեղական ինքնակառավարման մարմիններին:

Փաթեթի մյուս բաղադրիչները կարելի է ոչնչացնել կենցաղային աղբի հետ:

Վնասված սենսորի ապլիկատորը կամ բաց սենսորի ասեղը կարող են վնասվածք պատճառել:

Ոչնչացրեք սուր առարկաները տեղական օրենսդրությանը համապատասխան: Համոզվեք, որ սուր առարկաները վնասվածք չեն պատճառում Ձեզ և ուրիշներին:

Քանի որ ձեր սենսորը կարող է օգտագործման ընթացքում շփվել մարդու մարմնի հեղուկների հետ, այն պարունակում է վարակի վտանգ: Հեռացրեք տեղական կանոնակարգերին համապատասխան: Քանի որ սենսորը նախատեսված է միայն մեկանգամյա օգտագործման համար, այն չի ընկնում Եվրոպական 2012/19/EU դիրեկտիվի (Էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների թափոնների վերաբերյալ դիրեկտիվ) գործողության մեջ:

Այս արտադրանքը ներառում է մարտկոց, որը պարունակում է շատ բարձր մտահոգության առարկա նյութ (SVHC) ըստ REACH կանոնակարգի՝ 1,2-դիմեթօքսիէթան (CAS 110-71-4), որի կոնցենտրացիան 0.1% քաշից բարձր է: Նյութի անմիջական ազդեցություն չկա և, հետևաբար, ռիսկ չկա, երբ սենսորը շահագործվում է օգտագործման հրահանգներին համապատասխան:

## 22. Հաճախորդների սպասարկում

### Կապ հաստատեք մեզ հետ

Եթե խնդիրների եք հանդիպում, հարցեր ունեք կամ ավելի շատ տեղեկությունների կարիք ունեք Accu-Chek SmartGuide հավելվածի կամ սարքի մասին, կապ հաստատեք հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ: Հավելվածում անցեք «Մենյու > Կապ մեզ հետ»:

### Լուրջ միջադեպերի մասին հաղորդում

Եվրոպական Միության և Նույնական կարգավորող ռեժիմ ունեցող երկրներում հիվանդի/օգտատիրոջ/երրորդ կողմի համար. եթե այս սարքի օգտագործման ընթացքում կամ դրա օգտագործման հետևանքով տեղի է ունեցել լուրջ միջադեպ, խնդրում ենք հաղորդել դրա մասին արտադրողին և ձեր ազգային մարմնին:

### Տպագիր օգտագործողի ձեռնարկ

Եթե ցանկանում եք ստանալ այս օգտագործողի ձեռնարկի տպագիր տարբերակը, կապ հաստատեք հաճախորդների սպասարկման հետ:

Տպագիր տարբերակը անվճար է և կուղարկվի ձեզ մի քանի օրվա ընթացքում:

### Օգտագործողի ձեռնարկի ներբեռնում

Ներբեռնեք օգտագործողի ձեռնարկը ինտերնետին միացված վիճակում և պահպանեք այն ձեր բջջային սարքում,

եթե դա տեղի ունենա ինտերնետ կապ չունենալու դեպքում: Այս օգտագործողի ձեռնարկը հասանելի է ներբեռնման համար հետևյալ հասցեով`

<https://tools.accu-chek.com/documents/dms/index.html>\*

### Փաթեթի ներդիրի ներբեռնում

Փաթեթի ներդիրը հասանելի է ներբեռնման համար հետևյալ հասցեով`

<https://tools.accu-chek.com/documents/dms/index.html>\*

### Ավստրալիա

Roche Diabetes Care Australia Pty. Limited

2 Julius Avenue North Ryde

NSW 2113, Ավստրալիա

Accu-Chek SmartGuide հաճախորդների սպասարկում` 1800 434 121

[www.accu-chek.com.au](http://www.accu-chek.com.au)

Հոնկոնգ

HKMD համար՝ 251922

Roche Diagnostics (Hong Kong) Limited

17-րդ հարկ, Tower 1 Metroplaza,

223 Hing Fong Road,

Kwai Chung, Զոնկոնգ

Քեռ.՝ 24813387

Ջապոնի թեժ գիծ՝ +852-2485 7522 (գրասենյակ) ժամեր)

Էլ. փոստ՝ [smartguide.hk@roche.com](mailto:smartguide.hk@roche.com)

[www.accu-chek.com.hk](http://www.accu-chek.com.hk)

## 23 Ծրագրի թարմացման տարբերակներ

Դուք կարող եք գտնել հավելվածի յուրաքանչյուր թարմացման տարբերակի նշումները համապատասխան հավելվածների հարթակներում:

### iOS սարքեր

- 1 Մտեք App Store:
  - 2 Սեղմեք Որոնում:
  - 3 Փնտրեք Accu-Chek SmartGuide հավելվածը:
  - 4 Ընտրեք հավելվածը որոնման արդյունքներից:
  - 5 Սեղմեք Նորութուններ:
- ✓ Կցուցադրվեն թարմացման տարբերակերը:

### Android սարքեր

- 1 Մտեք Play Store:
  - 2 Փնտրեք Accu-Chek SmartGuide հավելվածը:
  - 3 Ընտրեք հավելվածը որոնման արդյունքներից:
  - 4 Սեղմեք Նորութուններ:
- ✓ Թողարկման նշումները կցուցադրվեն

## 24. Տեխնիկական տվյալներ

### 24.1 Accu-Chek SmartGuide հավելվածի տեխնիկական տվյալները

#### **Արտադրանքի անվանումը**

Accu-Chek SmartGuide հավելված

Արտադրանքի անվանման մասին լրացուցիչ տեղեկությունների համար սեղմեք Մենյու > Արտադրանքի մասին տեղեկություններ:

#### **Չավելվածի տեսակ**

Չավելված բջջային սարքերի համար

#### **Չավելվածի տարբերակ**

1.1

Ձեր օգտագործած հավելվածի տարբերակի մասին լրացուցիչ տեղեկությունների համար սեղմեք Մենյու > Արտադրանքի մասին տեղեկություններ:

#### **Աջակցվող օպերացիոն համակարգեր**

Չավելվածը հասանելի է միայն որոշակի օպերացիոն համակարգերի համար: Օգտագործեք հավելվածը միայն այն դեպքում, եթե օպերացիոն համակարգը աջակցվում է հավելվածի կողմից:

Չամատեղելի օպերացիոն համակարգերի և դրանց տարբերակների վերաբերյալ վերջին տեղեկությունների համար սեղմեք

<https://tools.accu-chek.com/documents/dms/index.html>:

#### **Աջակցվող բջջային սարքեր**

Դուք կարող եք ներբեռնել հավելվածը միայն այն դեպքում, եթե բջջային սարքը աջակցում է աշխատանքի համար անհրաժեշտ iOS կամ Android տարբերակը:

Չամատեղելի բջջային սարքերի վերաբերյալ վերջին տեղեկությունների համար սեղմեք

<https://tools.accu-chek.com/documents/dms/index.html>:

#### **Աջակցվող հարթակներ**

Accu-Chek Care. Անխափան կապ է հաստատում առողջապահության մասնագետների և շաքարային դիաբետ ունեցող անձանց հետ:

## **Պահեստային տարածք**

Հավելվածը պահպանում է CGM սեսիայի և գրանցամատյանի տվյալները, քանի դեռ բջջային սարքում բավարար պահեստային տարածք կա: Եթե պահեստային տարածքը բավարար չէ, հավելվածը տեղեկացնում է ձեզ և կանխում է նոր սենսոր միացնելը:

Հավելվածի կողմից ձեր բջջային սարքում պահվող տվյալները կողավորված են:

## **Փոխանակված տվյալներ**

Հավելվածը փոխանակում է հետևյալ տվյալները Roche Diabetes Care-ի ամպային ծառայության հետ.

- CGM տվյալներ
- Գրանցամատյանի տվյալներ
- Սխալի մասին հաղորդագրություններ
- Սպասարկման մասին հաղորդագրություններ
- Չգուշացումներ
- Հիշեցումներ
- Օգտատիրոջ կարգավորումներ (օրինակ՝ նպատակային միջակայքեր կամ հիշեցումներ)

Հավելվածը կարող է վերականգնել վերջին 6 ամիսների տվյալները Roche Diabetes Care-ի Cloud ծառայությունից, երբ Դուք մուտք եք գործում հավելված տեղադրումից հետո:

Մի օգտագործեք վերականգնված տվյալները թերապիայի որոշումներ կայացնելու համար, օրինակ՝ ինսուլինի դեղաչափի: Օգտագործեք միայն միացված սենսորից ստացված ընթացիկ տվյալները՝ թերապիայի որոշումներ կայացնելու համար, օրինակ՝ ինսուլինի դեղաչափի:

## **Աշխատանքի սկզբունքը**

Accu-Chek SmartGuide հավելվածը ծառայում է որպես CGM տվյալների հիմնական ցուցադրիչ և ընդունիչ:

## **Ինտերֆեյսներ**

Հավելվածն ունի ինտերֆեյս հետևյալ համակարգի հետ.

- Բջջային սարք. Պահանջում է Bluetooth անլար տեխնոլոգիայի հասանելիություն:

## **Հավելվածը տեղադրելու հատուկ պահանջներ**

- iOS սարքերը պահանջում են Apple App Store մուտք գործելու հնարավորություն:
- Android սարքերը պահանջում են Google Play մուտք գործելու հնարավորություն:

### **Սպասարկում**

Ներբեռնեք և տեղադրեք հավելվածի թարմացումները (եթե հասանելի են):  
Խորհուրդ է տրվում կարգավորել հավելվածի ավտոմատ թարմացումը:

Պարբերաբար ստուգեք իրադարձությունների գրանցամատյանը:

Համոզվեք, որ ձեր բջջային սարքն ունի բավարար ազատ պահեստային տարածք:

Ներբեռնեք և տեղադրեք օպերացիոն համակարգի թարմացումները (եթե հասանելի են): Օպերացիոն համակարգի թարմացումների համար հետևեք ձեր բջջային սարքի հրահանգներին:

Այնուամենայնիվ, նախքան ձեր բջջային սարքը թարմացնելը ավելի նոր օպերացիոն համակարգի տարբերակի, համոզվեք, որ հավելվածը համատեղելի է նոր օպերացիոն համակարգի տարբերակի հետ: Եթե կասկածներ ունեք, ստուգեք համատեղելի սարքերի ցանկը: <https://tools.accu-chek.com/documents/dms/index.html>: Եթե դեռևս օգնության կարիք ունեք, կապվեք հաճախորդների սպասարկման հետ:

### **Չափման լռելյան միջակայքեր և սահմանաչափեր**

| Միջակայքեր և սահմանաչափեր          | մգ/դլ               | մմոլ/լ                 |
|------------------------------------|---------------------|------------------------|
| Գլյուկոզայի շատ բարձր սահմանաչափ   | >250 մգ/դլ          | >13.9 մմոլ/լ           |
| Գլյուկոզայի բարձր միջակայք         | >180-ից ≤ 250 մգ/դլ | >10.0-ից ≤ 13.9 մմոլ/լ |
| Նպատակային միջակայք (ցածրից բարձր) | ≥ 70-ից ≤ 180 մգ/դլ | ≥ 3.9-ից ≤ 10.0 մմոլ/լ |

|                                 |                            |                               |
|---------------------------------|----------------------------|-------------------------------|
| Գլյուկոզայի ցածր միջակայք       | $\geq 54$ -ից $< 70$ մգ/դլ | $\geq 3.0$ -ից $< 3.9$ մմոլ/լ |
| Գլյուկոզայի շատ ցածր սահմանաչափ | $< 54$ մգ/դլ               | $< 3.0$ մմոլ/լ                |

Բոլոր միջակայքերն ու սահմանաչափերը կարգավորելի են, բացառությամբ Գլյուկոզայի շատ ցածր սահմանաչափի:

Գլյուկոզայի ահագանգերի սահմանաչափերը փոխելու համար անցեք «Մենյու» > «Գլյուկոզայի ահագանգեր»:

Նպատակային միջակայքի ցուցանիշները փոխելու համար անցեք «Մենյու» > «Նպատակային միջակայք»:

Համակարգի չափման միջակայքը 40 մգ/դլ-ից մինչև 400 մգ/դլ է (2.2 մմոլ/լ-ից մինչև 22.2 մմոլ/լ):

24. 2 Accu-Chek SmartGuide սարքի տեխնիկական տվյալները

### **Արտադրանքի անվանումը**

Accu-Chek SmartGuide սարք

### **Գործողության սկզբունքը**

Սարքը բաղկացած է ապլիկատորից և սենսորից: Ապլիկատորը օգտագործումից հետո դեն է նետվում, մինչդեռ սենսորը մնում է մաշկի վրա, և էլեկտրաքիմիական զգայուն տարրը տեղադրվում է ենթամաշկային շերտում: Սենսորը հեռացվում է կրելու ժամկետի ավարտից հետո:

Սենսորը չափաբերելու համար գլյուկոմետրով ստացված գլյուկոզայի ցուցանիշը մոտքագրվում է հավելված և ուղարկվում սենսորին: Գլյուկոզայի մակարդակը շարունակաբար վերահսկելու համար միջբջջային հեղուկի գլյուկոզայի ցուցանիշները սենսորի կողմից յուրաքանչյուր 5 րոպեն մեկ ուղարկվում են հավելված, որն աշխատում է հեռախոսի վրա:

### **Արտադրանքի չափսերը**

|  |              |
|--|--------------|
|  |              |
| Բարձրությունը (ներառյալ կաչուն շերտը)  | մոտ. 5.9 մմ  |
| Ասեղի երկարությունը                    | մոտ. 8.2 մմ  |
| Սենսորի տրամագիծը (առանց կաչուն շերտի) | մոտ. 33.3 մմ |
| Քաշը                                   | մոտ. 5 գ     |

### **Տվյալների փոխանցում**

Սենսորը հետևյալ տվյալներն է փոխանցում հավելվածին.

- Սերիական համար
- Ներդրված ծրագրաչարի (firmware) տարբերակ
- Սարքակազմի (hardware) տարբերակ
- Սենսորի տեղեկատվություն (Համակարգի ID / MAC հասցե)
- Հաջորդ չափաբերման ժամանակը
- CGM տվյալներ
- Կարգավիճակի մասին տեղեկություն

Սենսորի «Թրենդային ռեժիմում» ռեժիմում գեներացված CGM տվյալները նշված են սենսորի կարգավիճակի միջոցով:

Հայտարարության բիթ` «Պահանջվում է տրամաչափում»:

Սենսորը հավելվածից ստանում է հետևյալ տվյալները`

- Արյան գլյուկոզայի մակարդակը տրամաչափման համար
- CGM սեսիայի մեկնարկի ժամանակը

### **Հաղորդակցման ինտերֆեյս**

|  |   |
|--|---|
| <b>Նպատակը</b>   | Ապահովում է սենսորի և հեռախոսի միջև տվյալների անլար փոխանակումը:                        |
| <b>Ինտերֆեյսի բնութագրերը</b>                              | Bluetooth Low Energy 5.0 կամ ավելի բարձր  |
| <b>Ռադիոհաճախականության ընդունման և հաղորդման տիրույթը</b> | Bluetooth Low Energy 5.0: 2.402–2.480 ԳՀց   |
| <b>Մոդուլյացիայի տեսակը և հաճախականության բնութագրերը</b>  | GFSK (Գաուսյան հաճախականության շիֆթային մանիպուլյացիա)                                  |
| <b>Հաղորդման արդյունավետ ճառագայթվող հզորությունը</b>      | 10 մՎտ-ից պակաս   |
| <b>Ժամանակի համաժամեցման մեթոդը</b>                        | Սենսորը համաժամեցվում է հեռախոսի համաժամեցման միջակայքերին համապատասխան:                |
| <b>Bluetooth Low Energy-ի միջակայքը</b>                    | 10 մ  |
| <b>Bluetooth Low Energy կապի հաստատումը հեռախոսի հետ</b>   | Կապ հաստատելու համար հեռախոսի վրա պետք է միացված լինի Bluetooth Low Energy տեխնոլոգիան: |

## **Ռադիոհաճախականության խանգարումներ**

Կապի վրա կարող են ազդել ռադիոհաճախականության այլ սարքեր:

Էլեկտրամագնիսական համատեղելիություն (EMC)

EMC բոլոր թեստերն իրականացվել են IEC 60601-1-2:2014, IEC 60601-1-2:2014/AMD1:2020 ստանդարտներին համապատասխան:



ՉԳՈՒՇԱՑՈՒՄ

### **Խանգարումների ռիսկ**

Էլեկտրամագնիսական դաշտերը և ճառագայթումը կարող են խանգարել սենսորի պատշաճ աշխատանքին՝ հանգեցնելով սխալ CGM տվյալների: Սենսորը կարող է ազդել այլ սարքավորումների վրա (օրինակ՝ փոխանցվող Bluetooth ազդանշանների միջոցով), եթե այն օգտագործվում է իր տեխնիկական բնութագրերից դուրս: Օգտագործեք սենսորը միայն իր տեխնիկական բնութագրերի սահմաններում:



ՉԳՈՒՇԱՑՈՒՄ

### **Անսարքության ռիսկ**

Այլ սարքեր մի՛ դրեք սենսորի վրա կամ դրան շատ մոտ: Սենսորի օգտագործումը այլ սարքերի հետ կամ դրանց կողքին կարող է հանգեցնել սխալ աշխատանքի: Եթե նման օգտագործումն անհրաժեշտ է, հետևեք սենսորին և մյուս սարքերին: Ստուգեք, որ սենսորը և մյուս սարքերն աշխատում են ինչպես հարկն է:

Դյուրակիր ռադիոհաճախականության հաղորդակցման սարքերը (ներառյալ ծայրամասային սարքերը, ինչպիսիք են ալեհավաքի մալուխները և արտաքին ալեհավաքները) մի՛ մոտեցրեք սենսորին 30 սմ-ից (12 դյույմ) ավելի մոտ: Սա կարող է ազդել սենսորի աշխատանքի վրա:

### **Էլեկտրամագնիսական ճառագայթումներ**

Սենսորը համապատասխանում է ճառագայթումների հետևյալ ստանդարտներին.

- CISPR 11 (EN 55011) դաս B, խումբ 1
- RTCA DO160G Բաժին 21, կատեգորիա M՝ խցիկում օգտագործելու համար

### **Էլեկտրամագնիսական անխոցելիություն**

Սենսորը համապատասխանում է անխոցելիության հետևյալ ստանդարտներին և փորձարկման մակարդակներին.

Էլեկտրաստատիկ պարպում (IEC 61000-4-2), փորձարկման մակարդակ.

- Կոնտակտային՝ ± 2 կՎ, ± 4 կՎ, ± 6 կՎ, ± 8 կՎ
- Օդային՝ ± 2 կՎ, ± 4 կՎ, ± 8 կՎ, ± 15 կՎ

ճառագայթվող ՌՅ Էլեկտրամագնիսական դաշտեր (IEC 61000-4-3), փորձարկման մակարդակ.

- 10 Վ/մ, 80 ՄՅգ–2.7 ԳՅգ, 80 % AM 1 կՅգ-ում

Ռադիոհաճախականության անլար կապի սարքավորումներից ստացված մոտիկության դաշտեր (IEC 60601-1-2 աղյուսակ 9), Փորձարկում

Մակարդակ՝

| Փորձարկման հաճախականություն (ՄՅգ) | Դիապազոն (ՄՅգ) | Ճառայություն      | Մոդուլացում                        | ԱՆԽՈՑԵԼԻՈՒԹ ՅԱՆ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ (Վ/մ) |
|-----------------------------------|----------------|-------------------|------------------------------------|---|
| 385                               | 380-ից 390     | TETRA 400         | Իմպուլսային մոդուլացում 18 Յգ      | 27  |
| 450                               | 430-ից 470     | GMRS 460, FRS 460 | ՉՄ ± 5 կՅգ շեղում, 1 կՅգ սինուսոիդ | 28  |
| 710<br>745<br>780                 | 704-ից 787     | LTE ծերտ 13, 17   | Իմպուլսային մոդուլացում 217 Յգ     | 9   |

|                      |              |  |                                      |    |
|----------------------|--------------|--|--------------------------------------|----|
| 810<br>870<br>930    | 800-ից 960   | GSM 800/900,<br>TETRA 800,<br>iDEN 820, CDMA<br>850, LTE ձերտ<br>5             | Իմպուլսայ<br>ին մոդուլացում<br>18 Ջգ | 28 |
| 1720<br>1845<br>1970 | 1700-ից 1990 | GSM 1800;<br>CDMA 1900;<br>GSM 1900;<br>DECT; LTE<br>ձերտ 1, 3, 4,<br>25; UMTS | մոդուլացո<br>ւմ 217 Ջգ               | 28 |
| 2450                 | 2400-ից 2570 | Bluetooth,<br>WLAN, 802.11<br>b/g/n, RFID<br>2450, LTE ձերտ<br>7               | Իմպուլսային<br>մոդուլացում<br>217 Ջգ | 28 |
| 5240<br>5500<br>5785 | 5100-ից 5800 | WLAN 802.11<br>a/n   | Իմպուլսային<br>մոդուլացում<br>217 Ջգ | 9  |

**Արդյունաբերական հաճախականության մագնիսական դաշտեր (IEC 61000-4-8), Փորձարկման մակարդակ**

- 30 Ա/մ, 50 Ջգ
- 30 Ա/մ, 60 Ջգ

**Մոտակա մագնիսական դաշտեր (IEC 61000-4-39), Փորձարկման մակարդակ**

- 8 Ա/մ, 30 կՋգ, CW (անընդհատ ալիքի) մոդուլացում
- 65 Ա/մ, 134,2 կՋգ, իմպուլսային մոդուլացումով, լրացման գործակից՝ 50 %, կրկնման հաճախություն՝ 2,1 կՋգ

- 7,5 Ա/մ, 13,56 ՄՅց, իմպուլսային մոդուլացումով, լրացման գործակից՝ 50 %, կրկնման հաճախություն՝ 50 կՅց
- 

### Պաշտպանություն էլեկտրական հարվածից

BF տիպի էլեկտրոնային սարք՝ համաձայն IEC 60601-1 ստանդարտի: Պաշտպանություն էլեկտրական հարվածից:

---

### Պաշտպանություն հեղուկների ներթափանցումից

**IP28:** Տվիչը պաշտպանված է ջրի մեջ շարունակական ընկղման հետևանքներից՝ 1 մետր խորության վրա, մինչև 60 րոպե տևողությամբ:

---

### Մանրէազերծման (Ստերիլիզացման) մեթոդ

Ճառագայթում

### Ներգործող նյութեր

Սենսորը կրելու ընթացքում հետևյալ ներգործող նյութերի ընդունումը կարող է հանգեցնել բջջային հավելվածում ցուցադրվող CGM տվյալների կեղծ բարձրացման.

- Ասկորբինաթթու (վիտամին C)՝ օրական 500 մգ-ից ավելի ներքին ընդունման եղանակով, կամ ցանկացած քանակությամբ ներերակային
- Գենտիցինաթթվով հավելումներ
- Մեթիլդոպա  
Կեղծ բարձր CGM տվյալները կարող են հանգեցնել ինսուլինի գերդոզավորման և կարող են պատճառ դառնալ, որ Դուք բաց թողնեք հիպոգլիկեմիայի (արյան մեջ գլյուկոզայի խիստ ցածր մակարդակի) դրվագը: Եթե ընդունում եք թվարկված ներգործող նյութերից որևէ մեկը, խորհրդակցեք Ձեզ բուժող բժշկի հետ:

### Շրջակա միջավայրի պայմանները

Սենսորի տեղափոխման և պահպանման պայմանները չբացված փաթեթավորմամբ.


- Ձերմաստիճանի միջակայք՝ 2-ից 27 °C
- Խոնավության միջակայք՝ 10-ից 90 % (առանց կոնդենսացիայի)
- Օդի ճնշման միջակայք՝ 549-ից 1,060 հՊա

## Գործառնական արդյունավետության տվյալներ

Խորհրդակցեք Ձեզ բուժող բժշկի հետ՝ հետևյալ տվյալների օգտագործումը քննարկելու համար:

Accu-Chek SmartGuide սենսորի աշխատանքը գնահատվել է վերահսկվող կլինիկական փորձարկման ժամանակ (տվյալները \$այլում են): Ուսումնասիրությունը անցկացվել է 3 կլինիկական կենտրոններում և ներառել է 48 մարդ, ովքեր ունեին 1-ին կամ ինսուլին-կախյալ 2-րդ տիպի շաքարախտ (18 տարեկան և բարձր): Ուսումնասիրության յուրաքանչյուր մասնակից 14 օրվա ընթացքում կրել է երեք սենսոր թևերի վերին հատվածի հետևի մասում: Ուսումնասիրության ընթացքում իրականացվել են գլյուկոզայի մանիպուլյացիաներով նմուշառման օրեր, որտեղ մազանոթային գլյուկոզայի չափումները վերցվել են որպես համեմատական արժեքներ: Ուսումնասիրության ընթացքում ուսումնասիրվել են սենսորների երեք խմբաքանակ:

Նկար 1. Սենսորային արժեքների ռեգրեսիոն վերլուծություն՝ համեմատած մազանոթային չափումների հետ:



**a** = CGM Value [mg/dL]; **b** = Comparator Value [mg/dL]

Աղյուսակ 1: Ռեգրեսիոն վերլուծություն

|                               |                                |
|-------------------------------|--------------------------------|
| <b>Թեքություն</b>             | 1.02                           |
| <b>Առանցքի հատում</b>         | -4,2 մգ/դլ (-0,2 մմոլ/լ)       |
| <b>Կորելյացիա (Պիրսոնի r)</b> | 0.96                           |
| <b>N</b>                      | 15993                          |
| <b>Միջակայք</b>               | 40-400 մգ/դլ (2,2-22,2 մմոլ/լ) |
| <b>Ընդհանուր MARD</b>         | 9,2 %                          |

Աղյուսակ 2: Սենսորի աշխատանքի համեմատությունը մազանոթային չափումների հետ՝ ըստ գլյուկոզայի տարբեր միջակայքերի

| Գլյուկոզա                          | Ընդհանուր MAD/MARD*      |
|------------------------------------|--------------------------|
| < 54 մգ/դլ (3,0 մմոլ/լ)            | 7,5 մգ/դլ (0,42 մմոլ/լ)* |
| 54-69 մգ/դլ (3,0-3,8 մմոլ/լ)       | 7,0 մգ/դլ (0,39 մմոլ/լ)* |
| 70-180 մգ/դլ (3,9-10,0 մմոլ/լ)     | 9,8 %                    |
| > 180-250 մգ/դլ (10,0-13,9 մմոլ/լ) | 8,0 %                    |
| > 250-350 մգ/դլ (13,9-19,4 մմոլ/լ) | 7,3 %                    |

|  |       |
|--|-------|
| > 350 մգ/դլ (19,4 մմոլ/լ)  | 4,9 % |
| * 70 մգ/դլ-ից (3,9 մմոլ/լ) ցածր գլյուկոզայի դեպքում տարբերությունները ներկայացված են մգ/դլ-ով (մմոլ/լ)՝ հարաբերական տարբերությունների (%) փոխարեն: |       |

MARD-ը (Միջին Բացարձակ Հարաբերական Շեղում) CGM տվյալների միաժամանակ չափված արյան գլյուկոզայի ցուցանիշներից բացարձակ հարաբերական շեղումների միջինն է:

MARD-ը որոշվում է հետևյալ կերպ՝

- Միաժամանակ չափված արյան գլյուկոզայի ցուցանիշը հանվում է գլյուկոզայի շարունակական ցուցանիշից: Տարբերության բացարձակ մեծությունը դրվում է արյան գլյուկոզայի ցուցանիշի տոկոսային հարաբերության մեջ: Բոլոր զույգ ցուցանիշների տոկոսները գումարվում են իրար, և արդյունքը բաժանվում է ցուցանիշների զույգերի քանակի վրա (n):

MAD-ը (Միջին Բացարձակ Շեղում) CGM տվյալների բացարձակ շեղումների միջինն է՝ միաժամանակ չափված արյան գլյուկոզայի ցուցանիշներից:

MAD-ը որոշվում է հետևյալ կերպ՝

- Միաժամանակ չափված արյան գլյուկոզայի ցուցանիշը հանվում է գլյուկոզայի շարունակական ցուցանիշից, և վերցվում է տարբերության բացարձակ մեծությունը:

Բոլոր զույգ ցուցանիշների քանակները գումարվում են իրար, և արդյունքը բաժանվում է ցուցանիշների զույգերի քանակի վրա (n):

Աղյուսակ 3: Սենսորի աշխատանքի համեմատությունը մազանոթային չափումների հետ՝ ըստ Սենսորի օգտագործման ժամկետի

|                  | <b>Սկիզբ</b> | <b>Մեջտեղ</b> | <b>Վերջ</b>   |
|------------------|--------------|---------------|---------------|
| <b>Ընդհանուր</b> | <b>8,3 %</b> | <b>9,0 %</b>  | <b>10,8 %</b> |
| <b>MARD</b>      |              |               |               |

Աղյուսակ 4: Սենսորի աշխատանքը՝ ըստ համընկնման ցուցանիշների

|   | <b>Չույգերի<br/>ընդհանուր<br/>քանակ</b> | <b>±15 մգ/դլ<br/>(±0,8<br/>մմոլ/լ) և<br/>մազանոթա<br/>- յին<br/>չափումներ<br/>ի ±15 %-ի<br/>սահմաննե-<br/>րում</b> | <b>±20 մգ/դլ<br/>(±1,1<br/>մմոլ/լ) և<br/>մազանոթա<br/>- յին<br/>չափումներ<br/>ի ±20 %-ի<br/>սահմաննե-<br/>րում</b> | <b>±30 մգ/դլ<br/>(±1,7<br/>մմոլ/լ) և<br/>մազանոթա<br/>- յին<br/>չափումներ<br/>ի ±30 %-ի<br/>սահմաննե-<br/>րում</b> | <b>±40 մգ/դլ<br/>(±2,2<br/>մմոլ/լ) և<br/>մազանոթա<br/>- յին<br/>չափումներ<br/>ի ±40 %-ի<br/>սահմաննե-<br/>րում</b> |
|---|---|--|--|--|--|
| <b>Սենսորի<br/>ընդհանուր<br/>աշխատանք</b>   | 15993                                   | 13345 (83,4<br>%)  | 14471 (90,5<br>%)  | 15510 (97,0<br>%)  | 15803 (98,8<br>%)  |
| <b>Սենսորի<br/>աշխատա<br/>ն-քը &lt; 70<br/>մգ/դլ (3,9<br/>մմոլ/լ)</b>             | 1121                                    | 998 (89,0 %)   | 1057 (94,3 %)  | 1112 (99,2 %)  | 1118 (99,7 %)  |
| <b>Սենսորի<br/>աշխատա<br/>ն-քը 70 -<br/>180 մգ/դլ<br/>(3,9 - 10,0<br/>մմոլ/լ)</b> | 9793                                    | 7923 (80,9 %)  | 8718 (89,0 %)  | 9444 (96,4 %)  | 9660 (98,6 %)  |
| <b>Սենսորի<br/>աշխատա<br/>ն-քը &gt; 180<br/>մգ/դլ<br/>(10,0<br/>մմոլ/լ)</b>       | 5079                                    | 4424 (87,1 %)  | 4696 (92,5 %)  | 4954 (97,5 %)  |  |

Նկատի ունեցեք, որ ներկայացված աշխատանքային բոլոր տվյալները վերաբերում են «Թերապիայի ռեժիմում» գտնվող տվիչներին: Նկարագրված հետազոտության մեջ «Թրենդի ռեժիմում» գտնվող տվիչները ցուցաբերել են 10,2 %

ընդհանուր MARD: Ինսուլինի դոզավորման վերաբերյալ որոշումներ հնարավոր է կայացնել միայն «Թերապիայի ռեժիմում»: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Ձեր Սենսորի տրամաչափումը» գլուխը:

### **Կողմնակի երևույթներ**

Ուսումնասիրության ընթացքում սարքի հետ կապված լուրջ կողմնակի երևույթներ չեն գրանցվել: Ընդհանուր առմամբ, տեղի է ունեցել 35 կողմնակի երևույթ: Դրանցից 15-ը կապված էին կամ ենթադրաբար կապված էին սարքի հետ: Այս 15 երևույթները վերաբերում էին տեղադրման վայրում առաջացած ռեակցիաներին, ինչպիսիք են կարճատև արյունահոսությունը, ցավը, հեմատոման, Էրիթեման, թեթև բորբոքումը կամ քորը:

## 25 Լիցենզայի մասին տեղեկատվություն

© 2025 Roche Diabetes Care Roche Diabetes Care GmbH Sandhofer Strasse 116 68305  
Մանհայմ, Գերմանիա [www.accu-chek.com](http://www.accu-chek.com)

Սույն փաստաթուղթը լիցենզավորված է Apache License, Version 2.0-ի պայմաններով («Լիցենզիա»): Դուք չեք կարող օգտագործել այս \$այլը՝ բացառությամբ Լիցենզիայի պայմաններին համապատասխանելու դեպքերի: Լիցենզիայի պատճենը կարող եք ստանալ հետևյալ հղումով՝ <http://www.apache.org/licenses/LICENSE-2.0>

Եթե այլ բան նախատեսված չէ գործող օրենսդրությամբ կամ գրավոր համաձայնությամբ, Լիցենզիայի շրջանակներում տարածվող ծրագրակազմը տրամադրվում է «ԻՆՉՊԵՍ ՈՐ ԿԱ» սկզբունքով՝ ԱՌԱՆՑ ՈՐԵՎԷ ՏԵՍԱԿԻ ԵՐԱՃԻՒԲԵՆԵՐ ԿԱՄ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ՝ լինեն դրանք բացահայտ թե անուղղակի: Լիցենզիայով սահմանված թույլտվությունների և սահմանափակումների վերաբերյալ մանրամասների համար տե՛ս Լիցենզիայի տեքստը:

## 26 Բառարան

### **Չափաբերում (calibration)**

Գլյուկոմետրով ստացված գլյուկոզայի ցուցանիշների մուտքագրում հավելված՝ սենսորի ճշգրտությունը բարելավելու համար: Այս գործողությունը պահանջվում է ամեն անգամ, երբ նոր սենսոր է տեղադրվում և զուգակցվում հավելվածի հետ: Սա թույլ է տալիս սենսորից ստացված գլյուկոզայի ցուցանիշներն օգտագործել թերապևտիկ որոշումներ կայացնելու համար, ինչպիսին է ինսուլինի դեղաչափի որոշումը:

### **Չափաբերման ցուցանիշներ (calibration values)**

Գլյուկոմետրով ստացված գլյուկոզայի ընթացիկ ցուցանիշներ, որոնք մուտքագրվում են հավելված՝ սենսորի ճշգրտությունը բարելավելու համար: Սա թույլ է տալիս սենսորից ստացված գլյուկոզայի ցուցանիշներն օգտագործել թերապևտիկ որոշումներ կայացնելու համար, ինչպիսին է ինսուլինի դեղաչափի որոշումը:

### **Ներգործող նյութ (interfering substance)**

Որոշակի նյութ (օրինակ՝ դեղամիջոցում կամ սննդի մեջ), որն ընդունելու դեպքում կարող է բացասաբար ազդել գլյուկոզայի ցուցանիշների ճշգրտության վրա:

### **Միջբջջային հեղուկի գլյուկոզա (interstitial fluid glucose)**

Գլյուկոզա, որը գտնվում է ենթամաշկային հյուսվածքային բջիջները շրջապատող հեղուկի բարակ շերտում:

### **Ջեռախոս (mobile device)**

Սմարթֆոն կամ պլանշետ, որի վրա աշխատում է հավելվածը:

### **Թերապևտիկ որոշում (therapy decision)**

Ցանկացած բուժում, որը կիրառվում է՝ գլյուկոզայի ցուցանիշները նորմալ մակարդակի վերադարձնելու կամ այդ միջակայքում պահելու համար:

### **Թերապիայի ռեժիմ (Therapy Mode)**

Սենսորի կարգավիճակը չափաբերում կատարելուց հետո: Այս ռեժիմում CGM տվյալները կարող են օգտագործվել թերապևտիկ որոշումներ կայացնելու համար, ինչպիսին է ինսուլինի դեղաչափի որոշումը:

### **Միտումների ռեժիմ (Trend Mode)**

Սենսորի կարգավիճակը մինչև չափաբերում կատարելը: Այս ռեժիմում CGM տվյալները կարող են օգտագործվել միայն միտումները դիտարկելու համար՝ որպես ընդհանուր տեղեկանք:

## 27 Հապավումներ

**BE` Հացի միավոր (ՅՄ)** Ածխաջրերի հաշվարկման չափման միավոր: 1 ՅՄ-ն հավասար է 12 գ-ի:

**CC` Ածխաջրային ընտրություն (ԱԸ)** Ածխաջրերի հաշվարկման չափման միավոր: 1 ԱԸ-ն հավասար է 15 գ-ի:

**CGM` Գլյուկոզայի շարունակական մոնիթորինգ (ԳՇՄ)** Համակարգ, որը չափում է գլյուկոզայի մակարդակը մաշկի տակ տեղադրված փոքրիկ սենսորի միջոցով և ցուցադրում այդ մակարդակները հավելվածում:

**g` Գրամ** Չանգվածի չափման միավոր, որը հավասար է կիլոգրամի մեկ հազարերորդին:

**GMI` Գլյուկոզայի կառավարման ցուցիչ (ԳԿՑ)** Այս արժեքը հաշվարկվում է ձեր միջին գլյուկոզայի հիման վրա և գնահատում է ձեր HbA1c-ն:

**KE` Ածխաջրային միավոր (ԱՄ)** Ածխաջրերի հաշվարկման չափման միավոր: 1 ԱՄ-ն հավասար է 10 գ-ի:

**MAD` Միջին բացարձակ շեղում (ՄԲՇ)** Գլյուկոզայի շարունակական արժեքների բացարձակ շեղումների միջինը՝ միաժամանակ չափված արյան գլյուկոզայի արժեքներից:











**MARD` Միջին բացարձակ հարաբերական շեղում (ՄԲՀՇ)** Գլյուկոզայի շարունակական արժեքների բացարձակ հարաբերական շեղումների միջինը՝ միաժամանակ չափված արյան գլյուկոզայի արժեքներից:











**OS` Օպերացիոն համակարգ (ՕՀ)** Ծրագրակազմի հավաքածու, որը կառավարում է համակարգչի և բջջային սարքերի սարքակազմի ռեսուրսները և ընդհանուր ծառայություններ է մատուցում համակարգչային ծրագրերի և հավելվածների համար:











**Ս` Միավորներ** Ֆիզիկական մեծության չափման ստանդարտ:







## 28 Հավելվածի նշանների բացատրություն

| Պատկերակ  | Նկարագրություն    |
|---|-------------------|
| Հավելվածի նավիգացիա   |                   |
|    | Գլխավոր           |
|    | Գրանցամատյան      |
|    | Ավելացնել գրառում |
|  | Գրաֆիկներ         |
|  | Մենյու            |
| Էկրանի նավիգացիա  |                   |
|  | Չետ               |
|  | Փակել             |
|  | Նշիչ              |

|   |                                     |
|---|-------------------------------------|
|    | Բացվող մենյու                       |
|    | Լրացուցիչ տեղեկատվություն           |
| Չավելվածի մենյու  |                                     |
|    | Կառավարել ԳՇՄ տվիչը                 |
|    | Իրադարձությունների մատյան           |
|    | Գլուկոզայի ազդանշաններ              |
|   | Նպատակային միջակայք                 |
|  | Չափման միավոր                       |
|  | Կրիտիկական ծանուցումներ             |
|  | Սենսորի ժամկետի սպառման հիշեցումներ |
|  | Սենսորի կապի կորուստ                |

|   |  |
|---|--|
|    | Յաշիվ  |
|    | Օգտագործողի ձեռնարկ  |
|    | Արագ մեկնարկի ուղեցույց  |
|    | Ապրանքի մասին տեղեկատվություն  |
|    | Կապ մեզ հետ  |
| Գլխավոր էկրան   |  |
|  | Նշանակում է՝ կա չընթերցված հաղորդագրություն, որ բջջային սարքի ծանուցումների կարգավորումները օպտիմալ չեն          |
|  | Նշանակում է՝ հաղորդագրությունն ընթերցված է, սակայն բջջային սարքի ծանուցումների կարգավորումները դեռևս օպտիմալ չեն |
|  | Անցում կատարել Accu-Chek SmartGuide Predict հավելված   |
|  | Թրենդի սլաք. Ձեր գլուկոզայի արժեքը արագ բարձրանում է   |
|  | Թրենդի սլաք. Ձեր գլուկոզայի արժեքը բարձրանում է  |








|   |  |
|---|--|
|    | Թրեղի սլաք. Ձեր գլուկոզայի արժեքը կայուն է       |
|    | Թրեղի սլաք. Ձեր գլուկոզայի արժեքը ընկնում է      |
|    | Թրեղի սլաք. Ձեր գլուկոզայի արժեքը արագ ընկնում է |
|    | Տեղեկատվություն                                  |
|    | Ձեր ԳՇՄ տվիչը տաքանում է                         |
|   | Սխալի մասին հաղորդագրություն                     |
|  | Սպասարկման մասին հաղորդագրություն                |
|  | Նախազգուշացնող հաղորդագրություն                  |
| Գրաֆիկներ   |  |
|  | Բազալային ինսուլինի ներարկում                    |
|  | Բոլուսային ինսուլինի ներարկում                   |








|   |  |
|---|--|
|    | <p>Ածխաջրերի քանակ</p>   |
|    | <p>Նշումներ</p>  |
|    | <p>Օրացույց</p>  |
| <p>Գլուկոզայի ազդանշաններ</p>   |  |
|    | <p>Ամբողջ օրվա ազդանշաններ / Արթուն վիճակի ազդանշաններ</p>   |
|   | <p>Քնի ազդանշաններ</p>   |
| <p>Գրանցամատյան</p>   |  |
|  | <p>Գրանցամատյանի գրառումը հնարավոր չէ խմբագրել կամ ջնջել, քանի որ այն օգտագործվել է Սենսորի տրամաչափման համար:</p> |



## 29 Պայմանանշանների բացատրություն

Հետևյալ պայմանանշանները կարող են հայտնվել սարքի և փաթեթավորման վրա.

| Պայմանանշան   | Նկարագրություն  |
|---|---|
|    | Ծանոթացեք օգտագործման հրահանգներին կամ էլեկտրոնային օգտագործման հրահանգներին: |
|    | Հետևեք օգտագործման հրահանգներին (կապույտ նշան):                               |
|   | Ձերմաստիճանի սահմանափակում:   |
|  | Խոնավության սահմանափակում:  |
|  | Մթնոլորտային ճնշման սահմանափակում:  |

|   |  |
|---|--|
|    | <p>Օգտագործել մինչև նշված ժամկետը:</p>   |
|    | <p>Չօգտագործել, եթե փաթեթը վնասված է:</p>  |
|    | <p>Ստերիլիզացված է ճառագայթման միջոցով:</p>  |
|   | <p>Նախատեսված է միանվագ օգտագործման համար:</p>   |
|  | <p>Սարքը պաշտպանված է վտանգավոր մասերին հպումից և ջրի մեջ շարունակական ընկղմման ազդեցությունից (մինչև 60 րոպե, 1 մետր խորությամբ):</p> |
|  | <p>BF տիպի էլեկտրոնային սարք՝ համաձայն IEC 60601-1 ստանդարտի: Ապահովում է պաշտպանություն էլեկտրական հարվածից:</p>                      |
|  | <p>Արտադրության ամսաթիվ:</p>   |

|   |  |
|---|--|
|    | Բժշկական սարք:                         |
|    | Արտադրող:                              |
|    | Լիազորված ներկայացուցիչ ծվեյցարիայում: |
|    | Սարքի եզակի նույնացուցիչ:              |
|  | Կատալոգի համար:                        |
|  | Սերիական համար:                        |
|  | Խմբաքանակի կոդ:                        |

|   |   |
|---|---|
|  | <p>Համապատասխանում է ԵՄ կիրառելի օրենսդրության դրույթներին:</p>   |
|  | <p>Միայն Իսպանիայի և Պորտուգալիայի համար: Նշանը ցույց է տալիս թափոնների հեռացման տեղական կանոնները:</p> |

© 2025 Roche Diabetes Care

Roche Diabetes Care GmbH

Sandhofer Strasse 116

68305 Mannheim, Germany

[www.accu-chek.com](http://www.accu-chek.com)

ACCU-CHEK-ը և ACCU-CHEK SMARTGUIDE-ը Roche-ի ապրանքային նշաններն են:

Bluetooth® բառային նշանը և լոգոները գրանցված ապրանքային նշաններ են, որոնք պատկանում են Bluetooth SIG, Inc.-ին, և Roche-ի կողմից դրանց ցանկացած օգտագործում կատարվում է լիցենզիայի ներքո:

Բոլոր այլ ապրանքների անունները և ապրանքային նշաններն իրենց համապատասխան սեփականատերերի սեփականությունն են:

Վերջին թարմացում՝ 2025-04